ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԸ

(ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ)

ՀԱՅԿ ԹԵՏՀԱՐԱՏ

КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗЖЕ
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА

9(4) 2 „19 | 19-1945" 12453
П-30 | Пирбиргский
 Կենդանիները.

31/X | 23/V
17/III
10

9:327„1919-1945"
Պ
ՍՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.
Ա II 392526
124553

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԸ

(ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ)

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊՈՒՇԿԻՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԼԻԳԵՅԻՐԻՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1948

ФАЛЬСИФИКАТОРЫ ИСТОРИИ

(На армянском языке)

Армгиз, Ереван, 1948

Հունվարի վերջերին Ամերիկայի Միացյալ Նահանգների Պետական դեպարտամենտը, Անգլիայի և Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրությունների համագործակցությամբ, հրապարակեց գեկույցների և հիտլերյան դիվանագիտական պաշտոնյաների օրագրերից վերցված զանազան գրառումների մի ժողովածու, տալով այդ ժողովածուին «1939—1941 թ. թ. նացիստա-սովետական հարաբերությունները» խորհրդավոր վերնագիրը։

Ինչպես երևում է այդ ժողովածուի առաջաբանից, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունները դեռ 1946 թվի ամառը իրար հետ պայմանավորվել էին, որ հրապարակեն Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության 1918—1945 թ. թ. արխիվային այն նյութերը, որոնք գրավել էին Գերմանիայում ամերիկյան և անգլիական ռազմական իշխանությունները։ Ընդգծին ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ հրապարակված ժողովածուի մեջ մտցվել են միայն 1939—1941 թ. թ. վերաբերող նյութերը, իսկ նախորդ տարիներին և մասնավորապես Մյունխենի ժամանակաշրջանին վերաբերող նյութերը պետական դեպարտամենտի կողմից ժողովածուի մեջ չեն մտցվել և այդպիսով թաքցվել են համաշխարհային հասարակական կարծիքից։ Դա, իհարկե, պատահաբար չէ և հետապնդում է այնպիսի նպատակներ, որոնք ոչ մի առնչություն չունեն պատմական ճշմարտության օբեկտիվ և բարեխիղճ վերաբերմունք ցույց տալու հետ։

Այդ ժողովածուի, հիտլերյան պաշտոնյաների չստուգված և կամայականորեն ջոկված գրառումների միակողմանի հրապարակումը հասարակական կարծիքի աչքում մի կերպ արդարացնելու համար, անգլո-ամերիկյան մամուլը գործի է դրել մտացածին մի բացատրություն, որ իբր «ռուսները մերժել են նացիստական դիվանագիտության մասին համատեղ լիակատար հաշվետվություն հրապարակելու առաջարկը, որ արել է Արևմուտքը»։

Անգլո-ամերիկյան շրջանների այդ հայտարարությունը իրականությանը չի համապատասխանում:

Իրականում բանը հետևյալն է: Սովետական կառավարությունը, այն էապակցությամբ, որ 1945 թվի ամառը օտարերկրյա մամուլում լույս էին տեսել հաղորդագրություններ, թե Անգլիայում պատրաստություն է սկսվել Գերմանիայում որպես ռազմաավար գրավված փաստաթղթերը հրապարակելու համար, դիմել էր Մեծ Բրիտանիայի կառավարությանը, պնդելով, որ սովետական էքսպերտները մասնակցեն անգլո-ամերիկյան զորքերի գրաված գերմանական նյութերի համատեղ մշակմանը: Սովետական կառավարությունը անթույլատրելի էր գտնում այդպիսի փաստաթղթերի հրատարակումը առանց ընդհանուր համաձայնեցման և միևնույն ժամանակ չէր կարող պատասխանատվություն ստանձնել փաստաթղթերը առանց մանրազնին և օբեկտիվ ստուգման հրապարակելու համար, որովհետև վերոհիշյալ նյութերի հրապարակումը. առանց այդ տարրական պայմանների, կարող էր միայն վատթարացնել հակահիտլերյան կոալիցիայի անդամ պետությունների փոխհարաբերությունները: Սակայն անգլիական արտաքին գործերի մինիստրությունը մերժեց սովետական առաջարկը, հենվելով այն բանի վրա, թե գրավված հիտլերյան փաստաթղթերի պատճենները փոխանակելու մասին սովետական կառավարության հարցադրումը վաղաժամ է:

Հայտնի է նաև, որ 1945 թ. սեպտեմբերի 6-ին Գերմանիայի Վերահսկիչ խորհրդի Քաղաքական Դիրեկտորատում ամերիկյան դելեգացիան ներկայացրեց գերմանական արխիվների և փաստաթղթերի հետ վարվելու դիրեկտիվների իր նախագիծը: Այդ նախագիծը նախատեսում էր արխիվները հավաքելու և պահելու միասնական կարգի սահմանումը ամբողջ Գերմանիայի համար, ինչպես նաև Միավորված Ազգերի կազմակերպության մեջ մտնող պետությունների ներկայացուցիչների իրավունքները դրանց օգտագործման նկատմամբ: Նաև նախատեսվում էր այդ փաստաթղթերից պատճեններ հանելու և դրանք հրապարակելու հնարավորությունը: Այդ առաջարկը քննվեց Քաղաքական Դիրեկտորատի չորս նիստում, բայց անգլիացիների և ամերիկացիների խնդրանքով հետաձգվեց՝ իրենց ցուցում չունենալու պատրվակով, և ապա, ամերիկյան ներկայացուցչի այն հայտարարությունից հետո, թե

ԱՄՆ-ի կառավարությունը պատրաստում է նոր առաջարկ և խընդրում է ներկայացված նախագիծը վավերական չհամարել, հարցը հանվեց Քաղաքական Դիրեկտորատի օրակարգից։

Այդպիսով, այն հայտարարությունը, թե իբր սովետական կառավարությունը հրաժարվել է գերմանական արխիվային նյութերի հրապարակման նախապատրաստությանը մասնակցելուց. ստահոդ է։

Վերոհիշյալ ժողովածուի հրապարակման հետ միաժամանակ։ Միացյալ Նահանգներում և նրանցից կախում ունեցող երկրներում, կարծես մոգական դավազանի շարժումով, բարձրացավ չարանենգ ու սանձարձակ զրպարտիչ կամպանիայի մի նոր ալիք՝ 1939 թվին ՍՍՌՄ-ի և Գերմանիայի միջև չհարձակվելու պակտ կնքվելու առթիվ, որն իբրև թե ուղղված էր արևմտյան տերությունների դեմ.

Այդպիսով, ոչ մի տարակուսյա չի հարուցում ՍՍՌՄ-ի և Գերմանիայի 1939—1941 թ. թ. փոխհարաբերությունների վերաբերյալ ժողովածուի ԱՄՆ-ում հրապարակվելու իսկական նպատակը։ Դրա նպատակը չէ տալ պատմական իրադարձությունների օբեկտիվ շարադրումը, այլ խեղաթյուրել իրադարձությունների իսկական պատկերը, ստեր տարածել Սովետական Միության հասցեին, զրպարտել նրան և թուլացնել ագրեսիվ ու հակադեմոկրատական ուժերի դեմ պայքարող իսկական դեմոկրատական և կայուն մարտիկ Սովետական Միության միջազգային ազդեցությունը։

Այդպիսի ուխտադրուժ դիրքը համապատասխանում է միջդաշնակցային հարաբերությունների բնույթի նկատմամբ այն հայացքներին, որոնք տիպական են անգլո-ամերիկյան երկրների կառավարող շրջանների համար և կայանում են նրանում, որ դաշնակիցների միջև ազնիվ ու անկեղծ հարաբերությունների, նրանց փոխադարձ վստահության և օժանդակության փոխարեն, անց է կացվում բոլոր հնարավորությունները, մինչև իսկ զրպարտությունը օգտագործելու քաղաքականություն՝ իրենց դաշնակցին թուլացնելու, նրան իրենց նեղ շահերի համար օգտագործելու և նրա հաշվին իրենց դիրքն ամրապնդելու համար։

Չի կարելի նաև աչքաթող անել ԱՄՆ-ի կառավարող շրջանների ձգտումը՝ ՍՍՌՄ-ի դեմ իրենց մղած զրպարտիչ կամպանիայով թուլացնել իրենց երկրի առաջադեմ տարրերի ազդեցությունը, որոնք կողմնակից են ՍՍՌՄ-ի հետ հարաբերությունների բարե-

լավմանը։ ԱՄՆ-ի առաջադեմ տարրերի դեմ ուղղված հարվածը, անտարակույս, նպատակ ունի թուլացնել նրանց ազդեցությունը. աչքի առաջ ունենալով 1948 թվի աշնանը տեղի ունենալիք ԱՄՆ-ի նոր Պրեզիդենտի ընտրությունները։

Ժողովածուն հագեցված է այն փաստաթղթերով, որոնք թխել են հիտլերյան դիվանագիտական պաշտոնյաները գերմանական դիվանագիտական գրասենյակների խորշերում։ Հենց միայն այդ հանգամանքը պետք է նախազգուշացներ փաստաթղթերի միակողմանի օգտագործումից ու հրապարակումից, որոնք աչքի են ընկնում միակողմանիությամբ և միտումնավորությամբ և իրադարձությունները շարադրում են հիտլերյան կառավարության դիրքերից ու նպատակ ունեն հիտլերականների համար նպաստավոր լուսաբանում տալ այդ իրադարձություններին։ Այդ իսկ պատճառով սովետական կառավարությունը ժամանակին դեմ էր ռազմաավար վերցված գերմանական փաստաթղթերի միակողմանի հրապարակմանը՝ առանց նախնական ու խնամքով համատեղ կատարվող ստուգման։ Նույնիսկ ֆրանսիական կառավարական «Ֆրանս Պրես» գործակալությունը ստիպված է խոստովանելու, որ առանց Սովետական Միության գիտության երեք կառավարությունների կողմից հրապարակայնությանը հանձնված նյութերի հրապարակման կարգը «ոչ լիովին համապատասխանում է դիվանագիտական նորմալ պրոցեդուրային»։

Այնուամենայնիվ անգլիական կառավարությունը չհամաձայնվեց դրա հետ։ Ամերիկյան, անգլիական և ֆրանսիական կառավարությունները դիմեցին գերմանական փաստաթղթերի միակողմանի հրապարակմանը, կանգ չառնելով պատմությունը կեղծելու առջև, փորձելով զրպարտել Սովետական Միությանը, որն իր ուսերի վրա է կրել հիտլերյան ագրեսիայի դեմ մղված պայքարի հիմնական ծանրությունը։

Դրանով իսկ այդ կառավարությունները իրենց վրա վերցրին ամբողջ պատասխանատվությունը այդպիսի միակողմանի գործողության հետևանքների համար։

Նկատի ունենալով այդ հանգամանքը, Սովետական կառավարությունը իրեն իրավունք է վերապահում իր հերթին հրապարակել հիտլերյան Գերմանիայի և Անգլիայի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի կառավարությունների փոխհարաբերությունների վերաբերյալ այն

գաղտնի փաստաթղթերը, որոնք ընկել են Սովետական Կառավարության ձեռքը և որոնք թափցրել են այդ կառավարությունները հասարակական կարծիքից։ Նրանք թաքցրել են այդ փաստաթղթերը, չեն ցանկանում հրապարակել դրանք։ Բայց մենք գտնում ենք, որ այդ փաստաթղթերը, տեղի ունեցած ամեն ինչից հետո, պետք է հանձնվեն հրապարակայնությանը, որպեսզի կարելի լինի վերականգնել պատմական ճշմարտությունը։

Սովետական կառավարության տրամադրության տակ կան կարևոր փաստաթղթեր, որոնք գրավել են սովետական զորքերը հիտլերյան Գերմանիային ջախջախելու ժամանակ։ Դրանց հրապարակումը կօգնի ճիշտ լուսաբանելու հիտլերյան ագրեսիայի և երկրորդ համաշխարհային պատերազմի նախապատրաստման ու զարգացման իսկական ընթացքը։

Նույն այդ խնդրին է ծառայում «Պատմության կեղծարարները» պատմական տեղեկանքը, որը ներկայումս հրապարակում է ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից Սովետական Ինֆորմացիոն Բյուրոն։

Այդ հարցի վերաբերյալ գաղտնի փաստաթղթերը կհրապարակվեն ամենամոտ ժամանակներս։

I

ԻՆՉՊԵՍ ՍԿՍՎԵՑ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ամերիկյան կեղծարարները և նրանց անգլո-ֆրանսիական գործակիցները աշխատում են այնպիսի տպավորություն ստեղծել, թե գերմանական ագրեսիայի նախապատրաստումը, որ վերածվեց երկրորդ համաշխարհային պատերազմի, սկսվել է 1939 թվի աշնանից։ Բայց մեր օրերում, բացի ամենամիամիտ մարդկանցից, որոնք պատրաստ են հավատալու ամեն մի ուռուցիկ սենսացիայի, ո՞վ կարող է խաբվել։ Ո՞վ չգիտե, որ Գերմանիան պատերազմի նախապատրաստումը սկսել է Հիտլերի իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո։ Ո՞վ չգիտե, այնուհետև, որ հիտլերյան ռեժիմը գերմանական մոնոպոլիստական շրջաններն ստեղծել են Անգլիայի, Ֆրանսիայի և Միացյալ Նահանգների կառավարող շրջանների լիակատար հավանությամբ։

Պատերազմի նախապատրաստվելու և իրեն նորագույն սպառազինությամբ ապահովելու համար Գերմանիան պետք է վերականգներ և զարգացներ իր ծանր ինդուստրիան և, ամենից առաջ, Ռուրի մետալուրգիան ու ռազմական արդյունաբերությունը։ Առաջին իմպերիալիստական պատերազմում պարտություն կրելուց հետո, Գերմանիան, որ գտնվում էր Վերսայլի պայմանագրի ճընշման տակ, այդ բանը չէր կարող կարճ ժամանակամիջոցում կատարել իր սեփական ուժերով։ Գերմանական իմպերիալիզմը այդ բանում հսկայական օժանդակություն ստացավ Ամերիկայի Միացյալ Նահանգներից։

Ո՞վ չգիտե, որ ամերիկյան բանկերն ու տրեստները, գործելով կառավարության հետ միանգամայն համերաշխ, հետվերսալյան ժամանակաշրջանում գերմանական էկոնոմիկայի մեջ ներ-

դրին և Գերմանիային տրամադրեցին միլիարդ դոլարների հասնող վարկեր, որոնք ծառայեցին Գերմանիայի ռազմաարդյունաբերական պոտենցյալի վերականգնմանն ու զարգացմանը։

Հայտնի է, որ հետվերջալյան ժամանակաշրջանը Գերմանիայի համար նշանավորվեց միջոցառումների մի ամբողջ սիստեմով, որոնց նպատակն էր վերականգնել գերմանական ծանր ինդուստրիան, մասնավորապես գերմանական ռազմա-արդյունաբերական պոտենցիալը։ Այդ գործում հսկայական դեր խաղաց Դաուեսի այսպես կոչված ռեպարացիոն պլանը Գերմանիայի համար, որի օգնությամբ ԱՄՆ-ը և Անգլիան հույս ունեին գերմանական արդյունաբերությունը կախման մեջ դնել ամերիկյան և բրիտանական մոնոպոլիաներից։ Դաուեսի պլանը ուղի հարթեց գերմանական արդյունաբերության մեջ օտարերկրյա, առավելապես ամերիկյան կապիտալի ուժգին ներհոսման և արմատավորման համար։ Այդ բոլորի հետևանքով արդեն 1925 թվից սկսվեց գերմանական տընտեսության վերելքը, որ պայմանավորված էր արտադրական ապարատի վերասպառազինման ինտենսիվ պրոցեսով։ Դրա հետ միասին, խիստ աճեց գերմանական արտահանությունը, որը 1927 թվին հասավ 1913 թվի մակարդակին, իսկ պատրաստի ապրանքների գծով նույնիսկ 12 տոկոսով գերազանցեց այդ մակարդակը (1913 թվի գներով)։ Վեց տարվա ընթացքում, 1924 թվից մինչև 1929 թիվը, օտարերկրյա կապիտալի ներհոսանքը դեպի Գերմանիա կազմեց ավելի քան 10—15 միլիարդ մարկ երկարատև ներդրում և ավելի քան 6 միլիարդ մարկ կարճատև ներդրում։ Ըստ այլ աղբյուրների՝ կապիտալ ներդրումների ծավալը զգալիորեն ավելի մեծ է եղել։ Դրա հետևանքով վիթխարի չափով ուժեղացավ Գերմանիայի տնտեսական և, մասնավորապես, ռազմական պոտենցիալը։ Այդ գործում առաջատար նշանակությունը պատկանում էր ամերիկյան կապիտալ ներդրումներին, որոնք կազմում էին բոլոր երկարատև փոխառությունների գումարի ոչ պակաս քան 70 տոկոսը։

Լավ հայտնի է այն դերը, որ Գերմանիայի ծանր ինդուստրիայի ֆինանսավորման, ամերիկյան արդյունաբերության և գերմանական արդյունաբերության միջև ամենասերտ կապերի հաստատման ու ընդլայնման գործում խաղացին ամերիկյան մոնոպոլիաները՝ Դյուպոնների, Մորգանների, Ռոկֆելլերների, Լամոնտների

ընտանիքների և ԱՄՆ-ի մյուս ինդուստրիալ մագնատների գլխավորությամբ։ Ամերիկյան առաջատար մոնոպոլիաները ամենասերտ կերպով կապվեցին գերմանական ծանր ինդուստրիայի, ռազմական կոնցերնների և բանկերի հետ։ Ամերիկյան առաջատար «Դյուպոն դը Նեմուր» քիմիական կոնցերնը, որը ավտոմոբիլային «Ջեներալ-մոտորս» տրեստի խոշորագույն բաժնետերերից մեկն է, Բրիտանական կայսերական քիմիական տրեստը («Իմպերիալ քիմիկլ ինդաստրիս»), արդյունաբերական սերտ կապերի մեջ էին գտնվում գերմանական քիմիական «Ի. Գ. Ֆարբենինդուստրի» կոնցերնի հետ, որի հետ 1926 թվին կարտելային համաձայնություն կնքեցին վառոդի վաճառահանման համաշխարհային շուկաները բաժանելու մասին։ Ֆիլադելֆիայի (ԱՄՆ) «Ռոմ և Հաաս» ֆիրմայի վարչության նախագահը պատերազմից առաջ այդ ֆիրմայի Դարմշտադտի (Գերմանիա) ղեկավարի ընկերակիցն էր։ Ի դեպ, պետք է ասել, այժմ այդ կոնցերնի նախկին դիրեկտոր Ռուդոլֆ Մյուլլերը գործում է «Բիզոնիայում» և նշանավոր դեր է խաղում Քրիստոնեական-Դեմոկրատական Միության (ՔԴՄ) ղեկավար շրջաններում։ 1931 թ. և 1939 թ. միջև ընկած ժամանակամիջոցում, գերմանական կապիտալիստ Շմիդտը՝ «Ի. Գ. Ֆարբենինդուստրի» կոնցերնի նախագահը և «Դոյչե բանկ»-ի խորհրդի անդամը, վերահսկում էր ամերիկյան «Ջեներալ Դեյստաֆ կորպորեյշն» ֆիրման։ Մյունխենի կոնֆերանսից (1938 թ.) հետո, ամերիկյան «Ստանդարտ օյլ» տրեստը պայմանագիր կնքեց «Ի. Գ. Ֆարբենինդուստրի»-ի հետ, որի համաձայն վերջինս մասնակցություն էր ստանում ԱՄՆ-ում արտադրվող ավիացիոն բենզինի շահույթներից, փոխարեն հեշտությամբ հրաժարվելով Գերմանիայից իր սինթետիկ բենզինի արտահանումից, որի պաշարները Գերմանիան այն ժամանակ կուտակում էր ռազմական նպատակների համար։

Այսպիսի կապեր բնորոշ են ո՛չ միայն ամերիկյան կապիտալիստական մոնոպոլիաների համար։ Ո՛չ միայն առևտրական, այլև ռազմական նշանակություն ունեցող տնտեսական ամենասերտ հարաբերություններ, օրինակ, բուն պատերազմից առաջ, գոյություն ունեին բրիտանական արդյունաբերության ֆեդերացիայի և գերմանական կայսերական արդյունաբերական խմբի միջև։ Այդ երկու մոնոպոլիստական միավորումների նախագահները 1939

թվին Դյուսելդորֆում համատեղ հայտարարություն հրապարակեցին, որի մեջ, ի միջի այլոց, ասված էր, թե համաձայնության նպատակն է «ձգտել ապահովելու իրենց երկրների արդյունաբերական սիստեմների ըստ հնարավորին ավելի լայն համագործակցությունը»։ Եվ դա այն օրերին, երբ հիտլերյան Գերմանիան կո՛ւլ տվեց Չեխոսլովակիան։ Զարմանալի չէ, որ այդ առթիվ Լոնդոնի «Էկոնոմիստ» ժուռնալը գրում էր. «Դյուսելդորֆի մթնոլորտում չկա՞ արդյոք որևէ այնպիսի բան, որը խելացի մարդկանց հարկադրում է կորցնել դատողությունը»[1]։

Ամերիկյան և գերմանական կապիտալների, ինչպես նաև անգլիական կապիտալի սերտ միահյուսման բնորոշ օրինակ կարող է ծառայել Շրեդերի հայտնի բանկը, որի մեջ ղեկավար դեր էր խաղում գերմանական պողպատի տրեստը՝ «Ֆարեյնիգտե շտալվերկեն», որ կազմակերպել էին Ստիններսը, Տիսենը և Ռուրի մյուս արդյունաբերական մագնատները, կենտրոններ ունենալով Նյու-Յորքում և Լոնդոնում։ Այդ բանկի գործերում առաջատար դեր էին խաղում Ալլեն Դալլեսը, Լոնդոնի, Քյոլնի և Համբուրգի Շրեդերների դիրեկտորը, Նյու-Յորքի, «Ի. Հենրի Շրեդեր Բենկինգ կորպորեյշընն» ֆիրմաները։ Այդ բանկի Նյու-Յորքի կենտրոնում առաջատար դեր էր խաղում «Սալիվան էնդ Կրոմվել» փաստաբանական հայտնի ֆիրման, որի գլուխ կանգնած էր Ջոն Ֆոստեր Դալլեսը, պ-րն Մարշալլի ներկայիս գլխավոր խորհրդատուն, որը սերտորեն կապված է Ռոկֆելլերի նավթային «Ստանդարտ օյլ» համաշխարհային տրեստի հետ, ինչպես նաև Ամերիկայի ամենահզոր «Չեյզ Նեյշընել Բենկ» բանկի հետ, որ հսկայական կապիտալներ է ներդրել գերմանական արդյունաբերության մեջ։

Նյու-Յորքում 1947 թվին լույս տեսած Ռ. Սեսիուլի գրքում ընդգծվում է, թե հենց որ Գերմանիայում հետվերսալյան ժամանակաշրջանում կանգնեցվեց ինֆլյացիան և մարկը կայունացավ, օտարերկրյա փոխառությունները տառացիորեն հորդեցին Գերմանիա։ 1924 և 1930 թվերի ժամանակամիջոցում Գերմանիայի օտարերկրյա պարտքն ավելացավ ավելի քան 30 միլիարդ մարկով։

---

1. Կորվին դը Էդվարդս. Միջազգային կարտելները էկոնոմիկայում ոգ քաղաքականության մեջ, 1947 թ.։

Օտարերկրյա, գլխավորապես ամերիկյան կապիտալի օգնությամբ, գերմանական արդյունաբերությունը, հատկապես «Ֆարբենիգտե շտալվերկեն» (Գերմանական ֆիրման) լայնորեն վերակառուցվեց և մոդեռնացվեց։ Մի քանի փոխառություններ անմիջականորեն տրվում էին վերասպառազինության մեջ գլխավոր դեր խաղացող ֆիրմաներին[1]։

Շրեդերի անգլո-գերմանո-ամերիկյան բանկի հետ միաժամանակ, գերմանական պողպատի «Ֆարբենիգտե շտալվերկե» տրեստի ֆինանսավորման գործում, այդ տարիներին, ղեկավար դեր էր խաղում Նյու-Յորքի խոշորագույն բանկերից մեկը՝ Դիլլոն, Ռիդ էնդ Կոմպանիան, որի դիրեկտորների թվում մի շարք տարիների ընթացքում գտնվում էր պաշտպանության ներկայիս մինիստր Ֆորրեստոլը[2]։

Ամերիկյան դոլարների այդ ոսկե անձրևը բեղմնավորեց հիտլերյան Գերմանիայի ծանր արդյունաբերությունը և, մասնավորապես, ռազմական արդյունաբերությունը։ Անդրօվկիանոսյան մոնոպոլիաների կողմից հիտլերյան Գերմանիայի ռազմական էկոնոմիկայի մեջ ներդրված ամերիկյան այդ միլիարդ դոլարները վերակենդանացրին գերմանական ռազմական պոտենցիալը և հիտլերյան ռեժիմի ձեռքը տվին նրա ագրեսիան իրագործելու համար անհրաժեշտ զենքը։

Կարճ ժամանակամիջոցում, հենվելով գլխավորապես ամերիկյան մոնոպոլիաների ֆինանսական օժանդակության վրա, Գերմանիան վերստեղծեց ռազմական հզոր արդյունաբերություն, որն ընդունակ էր արտադրելու հսկայական քանակությամբ առաջնակարգ սպառազինություն, շատ հազար տանկեր, ինքնաթիռներ, հրետանային հրանոթներ, նորագույն տիպի ռազմա-ծովային ռազմանավեր և սպառազինության այլ տեսակներ։

Այս բոլորը կցանկանային մոռանալ պատմության կեղծարարները, որոնք փորձում են խուսափել իրենց վարած քաղաքա-

---

1. *Richard Sasuly, IG. Farben, Boni and Gaer, New-York, 1947, p. 80.*
2. *Stock Exchange Year Book, London, 1925; Who's Who in America; Who's Who in Finance, Banking and Insurance; Moody's Manual of Ralloads and Corporation Securities, Poor's Manual, 1924—1939.*

ֆանության պատասխանատվությունից, մի քաղաքականություն, որն սպառազինեց Հիտլերյան ագրեսիան, սանձազերծ արավ երկրորդ համաշխարհային պատերազմը և հասցրեց պատմության մեջ դեռևս չտեսնված ռազմական կատաստրոֆի, որը մարդկությունից խլեց միլիոնավոր ու միլիոնավոր զոհեր։

Այսպիսով, չի կարելի մոռանալ, որ Հիտլերյան ագրեսիայի առաջին և կարևորագույն նախադրյալը Գերմանիայի ծանր արդյունաբերության և ռազմական ինդուստրիայի վերածնումն ու նորացումն էր, որը հնարավոր դարձավ միայն Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարող շրջանների ֆինանսական ուղղակի և լայն օգնության շնորհիվ։

Բայց այս դեռ բոլորը չէ։

Հիտլերյան ագրեսիայի սանձազերծմանը նպաստող մյուս վճռական հանգամանքը Անգլիայի և Ֆրանսիայի կառավարող շրջանների քաղաքականությունն էր, որը հայտնի է որպես Հիտլերյան Գերմանիայի «խաղաղացման» քաղաքականություն, կոլեկտիվ անվտանգությունից հրաժարվելու քաղաքականություն։ Այժմ բոլորի համար պետք է պարզ լինի, որ անգլո-ֆրանսիական կառավարող շրջանների հենց այդ քաղաքականությունը, որն արտահայտվում էր կոլեկտիվ անվտանգությունից հրաժարվելու, գերմանական ագրեսիային հակահարված տալուց հրաժարվելու, Հիտլերյան Գերմանիայի ագրեսիվ պահանջներին ընդառաջ գնալու մեջ, հանգեցրեց երկրորդ համաշխարհային պատերազմի։

Անցնենք փաստերին։

Հիտլերի իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո, անգլիական և ֆրանսիական կառավարությունների ջանքերի հետևանքով, 1933 թ. Հռոմում ստորագրվեց չորս տերությունների՝ Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի «Համաձայնության և համագործակցության Պակտը»։ Այդ պակտը նշանակում էր անգլիական և ֆրանսիական կառավարությունների համաձայնությունը գերմանական և իտալական ֆաշիզմի հետ, որը դեռևս այն ժամանակ չէր թաքցնում իր ագրեսիվ դիտավորությունները։ Դրա հետ միասին, ֆաշիստական պետությունների հետ կնքված այդ պակտը նշանակում էր հրաժարվել ագրեսիվ պետությունների դեմ ուղղված խաղաղասեր տերությունների միասնական ճակատի ամրապնդման քաղաքականությունից։ Համաձայ-

նության գալով Գերմանիայի ու Իտալիայի հետ, անտես առնելով այդ ժամանակ տեղի ունեցող զինաթափման կոնֆերանսի մասնակից մյուս տերություններին, որոնք քննարկում էին սովետական առաջարկությունը՝ կնքել չհարձակման պակտ և հարձակվող կողմը որոշելու վերաբերյալ պակտ,— Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան հարված հասցրին ժողովուրդների խաղաղության ու անվտանգության ապահովման գործին։

Դրանից անմիջապես հետո, 1934 թվին, Անգլիան ու Ֆրանսիան Հիտլերին օգնեցին օգտագործելու իրենց հետ դաշնակից պանական Լեհաստանի թշնամական դիրքը ՍՍՌՄ-ի նկատմամբ, որի հետևանքով կնքվեց գերմանա-լեհական չհարձակման պակտ, որը հանդիսացավ գերմանական ագրեսիայի նախապատրաստման լուրջ էտապներից մեկը։ Այդ պակտը Հիտլերին անհրաժեշտ էր կոլեկտիվ անվտանգության կողմնակիցների շարքերը քայքայելու, և այդ օրինակով ցույց տալու համար, թե Եվրոպան կարիք ունի ո՛չ թե կոլեկտիվ անվտանգության, այլ երկկողմանի համաձայնությունների։ Դա գերմանական ագրեսիային հնարավորություն էր տալիս անձամբ որոշելու, թե ո՞ւմ հետ և ե՞րբ կնքել համաձայնագիր, ո՞ւմ վրա և ե՞րբ հարձակում գործել։ Անտարակույս, գերմանա-լեհական պակտը առաջին լուրջ ճեղքվածքն էր կոլեկտիվ անվտանգության շենքում։

Հիտլերը ավելի համարձակ դառնալով, մի շարք միջոցներ գործադրեց Գերմանիայի զինված ուժերը բացահայտորեն վերականգնելու համար, որը ոչ մի դիմադրություն չառաջացրեց անգլիական և ֆրանսիական կառավարողների կողմից։ Ընդհակառակը, շուտով՝ 1935 թվին, Լոնդոնում, ուր դրա համար ժամանել էր Ռիբբենտրոպը, կնքվեց անգլո-գերմանական ծովային համաձայնագիր, որի հիման վրա Մեծ Բրիտանիան համաձայնվեց գերմանական ռազմա-ծովային զինված ուժերի վերականգնմանը համարյա ֆրանսիական ռազմական նավատորմին հավասար ծավալով։ Բացի դրանից, Հիտլերը իրավունք ստացավ կառուցելու սուզանավեր՝ բրիտանական ստորջրյա նավատորմի 45 տոկոսին հավասար ընդհանուր ջրածավալով։ Հենց այդ ժամանակաշրջանին են վերաբերում նաև Հիտլերյան Գերմանիայի այն միակողմանի գործողությունները, որոնց նպատակն էր վերացնել Գերմանիայի զինված ուժերի համար Վերսալի Պայմանագրով սահմանված

մյուս ամեն տեսակ սահմանափակումները, առանց որևէ դիմադրության հանդիպելու Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի կողմից

Ֆաշիստական ագրեսորների ախորժակը օրեցօր ավելանում էր՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի բացահայտ թողտվությամբ։ Հարկավ, պատահաբար չէ, որ այդ ժամանակ հեշտությամբ գլուխ էին գալիս և՛ Գերմանիայի, և՛ Իտալիայի ռազմական ինտերվենցիան Հաբեշստանում ու Իսպանիայում։

Միմիայն Սովետական Միությունը հետևողականորեն և հաստատակամությամբ անց էր կացնում խաղաղության իր քաղաքականությունը, պաշտպանելով ի դեպ Ազգերի Լիգայի անդամ հանդիսացող Հաբեշստանի իրավահավասարության ու անկախության սկզբունքները և Իսպանիայի օրինական ռեսպուբլիկական կառավարության իրավունքը՝ օժանդակություն ստանալու դեմոկրատական երկրներից գերմանա-իտալական ինտերվենցիայի դեմ։

«Սովետական Միությունը,— ասել է Վ. Մ. Մոլոտովը ՍՍՌ Միության Կենտգործկոմի սեսիայում 1937 թվի հունվարի 10-ին, Հաբեշստանի վրա Իտալիայի գործած հարձակման առթիվ,— Ազգերի Լիգայում ցույց տվեց իր հավատարմությունը այդ սկզբունքին, բոլոր պետությունների պետական անկախության և ազգային իրավահավասարության սկզբունքին՝ փոքր երկրներից մեկի՝ Հաբեշստանի օրինակով։ Սովետական Միությունը նաև օգտագործեց իր մասնակցությունը Ազգերի Լիգային, որպեսզի գործնականորեն անցկացնի իր գիծը իմպերիալիստական ագրեսորի նկատմամբ»[1]։

Այն ժամանակ, Վ. Մ. Մոլոտովը ասել է՝ «Իտալա-Հաբեշական պատերազմը ցույց է տալիս, որ համաշխարհային պատերազմի սպառնալիքը ավելի ու ավելի է աճում, ավելի ու ավելի է ներգրավում Եվրոպան»[2]։

Իսկ ի՞նչ էին անում այդ ժամանակ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունները, որոնց աչքի առջև ֆաշիստական ավազակները ավելի ու ավելի լկտիաբար դատաստան էին տեսնում իրենց զոհերի նկատմամբ։ Նրանք մատը մատի չխփեցին, որպեսզի սանձահարեն գերմանական և իտալական ագրեսորներին, որպեսզի պաշտպանեն ժողովուրդների ոտնահար-

---

1. Վ. Մ. Մոլոտով— «Հոդվածներ և ճառեր» 1935—36 թ. թ., էջ 176։
2. Նույն տեղը, էջ 177։

վող իրավունքները, որպեսզի պահպանեն խաղաղությունը և կանգնեցնեն համաշխարհային երկրորդ վերահաս պատերազմը։

Միայն Սովետական Միությունը անում էր հնարավոր ամեն ինչ, ֆաշիստական ագրեսորների ուղին փակելու համար։ Սովետական Միությունը հանդես եկավ որպես կոլեկտիվ անվտանգության նախաձեռնող ու պաշտպան։ Դեռ 1933 թվի փետրվարի 6-ին Ջինաթափման Գլխավոր հանձնաժողովում Սովետական Միության ներկայացուցիչ Մ. Մ. Լիտվինովը առաջարկեց դեկլարացիա ընդունել ագրեսիան և հարձակվող կողմը որոշելու մասին։ Առաջարկելով որոշել հարձակվող կողմը, Սովետական Միությունը ելնում էր այն հանգամանքից, որ ընդհանուր անվտանգություն հաստատելու և սպառազինությունների առավելագույն կրճատման համաձայնագրի կնքումը հեշտացնելու շահերի համար, անհրաժեշտ է որքան կարելի է ավելի ճշգրիտ կերպով որոշել «հարձակում» հասկացողությունը, որպեսզի հնարավոր լինի «կանխել այն արդարացնելու ամեն մի պատրվակ»։ Սակայն այդ առաջարկը մերժեց կոնֆերանսը, որը գործում էր Անգլիայի և Ֆրանսիայի ղեկավարությամբ ի հաճույս գերմանական ագրեսիայի։

Բոլորին հայտնի է Ազգերի Լիգայում Սովետական Միության և Մ. Մ. Լիտվինովի նախագահությամբ նրա դելեգացիայի մղած համառ ու երկարատև պայքարը կոլեկտիվ անվտանգությունը պահպանելու և ամրապնդելու համար։ Նախապատերազմյան ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում սովետական դելեգացիան Ազգերի Լիգայում պաշտպանում էր կոլեկտիվ անվտանգության սկզբունքը, իր ձայնը բարձրացնելով ի պաշտպանություն այդ սկզբունքի Ազգերի Լիգայի համարյա յուրաքանչյուր նիստում, Ազգերի Լիգայի համարյա յուրաքանչյուր հանձնաժողովում։ Բայց, ինչպես հայտնի է, սովետական դելեգացիայի ձայնը մնաց բարբառո հանապատի։ Ամբողջ աշխարհին հայտնի են սովետական դելեգացիայի առաջարկները կոլեկտիվ անվտանգությունն ամրապնդելու միջոցների մասին։ Այդ առաջարկները սովետական կառավարության հանձնարարությամբ ուղարկվել էին Ազգերի Լիգայի գլխավոր քարտուղար պ-ն Ավենոլին 1936 թ. օգոստոսի 30-ին, խնդրելով քննել այդ առաջարկները Ազգերի Լիգայում։ Բայց հայտնի է, որ այդ առաջարկները թաղվեցին Ազգերի Լիգայի արխիվներում, առանց որևէ ընթացք ստանալու։

Պարզ էր, որ Անգլիան և Ֆրանսիան, որոնք ղեկավարում էին այդ ժամանակ Ազգերի Լիգան, հրաժարվում են գերմանական ագրեսիային կոլեկտիվ դիմադրություն ցույց տալուց։ Իսկ նրանք կոլեկտիվ անվտանգությունից հրաժարվում էին այն պատճառով, որ դա խանգարում էր նրանց անցկացնելու գերմանական ագրեսիան «խաղաղացնելու» իրենց նոր քաղաքականությունը, Հիտլերյան ագրեսիային զիջումներ անելու քաղաքականությունը։ Իհարկե. այդ քաղաքականությունը չէր կարող չհանգել գերմանական ագրեսիայի ուժեղացմանը, բայց անգլո-ֆրանսիական կառավարող շրջանները գտնում էին, որ դա վտանգավոր չէ, որովհետև, բավարարելով Հիտլերյան ագրեսիային Արևմուտքում արված զիջումներով, կարելի էր նրան հետագայում ուղղել դեպի Արևելք և օգտագործել որպես ՍՍՌՄ-ի դեմ ուղղված մի գործիք։

Համկ(բ)Պ 18-րդ համագումարում, 1939 թվի մարտին, հաշվետու զեկուցման մեջ բացատրելով Հիտլերյան ագրեսիայի ուժեղացման պատճառները, Ի. Վ. Ստալինը ասել է.

«Գլխավոր պատճառը ոչ-ագրեսիվ երկրների մեծամասնության և, ամենից առաջ, Անգլիայի ու Ֆրանսիայի հրաժարվելն է կոլեկտիվ անվտանգության քաղաքականությունից, ագրեսորներին կոլեկտիվ հակահարված տալու քաղաքականությունից, նրանց անցնելը չմիջամտելու դիրքին, «չեզոքության» դիրքին»[1]։

Ընթերցողին շփոթության մեջ գցելու և միաժամանակ Սովետական կառավարությանը զրպարտելու համար ամերիկյան թերթակից Նիլ Ստենֆորդը պնդում է, որ Սովետական Կառավարությունը կանգնած է կոլեկտիվ անվտանգության դեմ, որ Մ. Մ. Լիտվինովը ազատվել է Արտգործժողկոմի պոստից և փոխարինվել է Վ. Մ. Մոլոտովով այն պատճառով, որ Մ. Մ. Լիտվինովը անց էր կացնում կոլեկտիվ անվտանգությունն ամրապնդելու քաղաքականություն։ Դժվար է պատկերացնել ավելի անմիտ որևէ բան, քան այդ ֆանտաստիկ պնդումը։ Հասկանալի է, որ Մ. Մ. Լիտվինովը անց էր կացնում ոչ թե իր անձնական քաղաքականությունը, այլ Սովետական Կառավարության քաղաքականությունը,

---

1. Ի. Վ. Ստալին— «Հաշվետու զեկուցում պարտիայի 18-րդ համագումարում Համկ(բ)Պ Կենտկոմի աշխատանքի մասին.— «Լենինիզմի հարցերը», հայ. հրատ., էջ 694։

Մյուս կողմից, բոլորին հայտնի է Սովետական Կառավարության և նրա ներկայացուցիչների, այդ թվում Մ. Մ. Լիտվինովի պայքարը կոլեկտիվ անվտանգության համար ամբողջ նախապատերազմյան ժամանակաշրջանի ընթացքում։

Ինչ վերաբերում է արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի պոստում Վ. Մ. Մոլոտովի նշանակվելուն, ապա միանգամայն պարզ է, որ ֆաշիստական ագրեսորների կողմից երկրորդ համաշխարհային պատերազմը նախապատրաստելու բարդ իրադրության պայմաններում, երբ Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան, որոնց թիկունքին կանգնած էին Ամերիկայի Միացյալ Նահանգները, ուղղակի թողտվությամբ էին վերաբերվում ագրեսորներին և նրանց դրդում էին պատերազմի դուրս գալ Սովետական Միության դեմ, անհրաժեշտ էր այնպիսի պատասխանատու պոստում, ինչպիսին է Արտաքին Գործերի ժողովրդական Կոմիսարի պոստը, ունենալ ավելի փորձված և երկրում ավելի ժողովրդականություն վայելող քաղաքական գործիչ, քան Մ. Մ. Լիտվինովը։

Արևմտյան տերությունների հրաժարվելը կոլեկտիվ անվտանգության պակտից պատահականություն չէր։ Այդ ժամանակաշրջանում պայքար ծավալվեց միջազգային քաղաքականության երկու ուղղությունների միջև։ Մեկ ուղղությունը պայքարն էր հանուն խաղաղության, հանուն կոլեկտիվ անվտանգության կազմակերպման և հանուն դիմադրության ագրեսիային՝ խաղաղասեր ժողովուրդների միացյալ ուժերով։ Այդ ուղղությունը բռնել էր Սովետական Միությունը, հետևողականորեն և աննկուն պաշտպանելով բոլոր մեծ ու փոքր խաղաղասեր ժողովուրդների շահերը։ Մյուս ուղղությունը հրաժարումն էր կոլեկտիվ անվտանգություն կազմակերպելուց, հրաժարումն ագրեսիային դիմադրություն ցույց տալուց, որն անխուսափելիորեն խրախուսում էր ֆաշիստական երկրները՝ ուժեղացնելու իրենց ագրեսիվ ակտիվությունը և դրանով իսկ նպաստում էր նոր պատերազմի ծավալմանը։

Այդ բոլորից երևում է հետևյալը՝ պատմական ճշմարտությունն այն է, որ հիտլերյան ագրեսիան հնարավոր դարձավ նախ այն պատճառով, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները գերմանացիներին օգնեցին կարճ ժամանակամիջոցում ստեղծել գերմանական ագրեսիայի ռազմա-տնտեսական բազան ու այդպիսով զինեցին այդ ագրեսիան, և, երկրորդ, այն պատճառով, որ անգլո-

ֆրանսիական կառավարող շրջանների կոլեկտիվ անվտանգությունից հրաժարվելը ջլատեց խաղաղասեր երկրների շարքերը, ջլատեց այդ երկրների միասնական ճակատը ընդդեմ ագրեսիայի, ճանապարհ հարթեց գերմանական ագրեսիայի համար և օգնեց Հիտլերին ծավալելու երկրորդ համաշխարհային պատերազմը։

Ի՞նչ կլիներ, եթե Միացյալ Նահանգները չֆինանսավորեին հիտլերյան Գերմանիայի ծանր արդյունաբերությունը, իսկ Անգլիան ու Ֆրանսիան չհրաժարվեին կոլեկտիվ անվտանգությունից, այլ ընդհակառակը, Սովետական Միության հետ կազմակերպեին կոլեկտիվ դիմադրություն գերմանական ագրեսիային։

Հիտլերյան ագրեսիան կմնար առանց բավարար սպառազինության, հիտլերյան զավթողական քաղաքականությունը կընկներ կոլեկտիվ անվտանգության ռեժիմի մամլակի տակ։ Գերմանիայի համար համաշխարհային երկրորդ պատերազմ հաջող ծավալվելու շանսերը կպակասեին մինչև նվազագույն չափի։ Եվ եթե հիտլերականները, չնայած նրանց համար այդ անբարենպաստ պայմաններին, այնուամենայնիվ սիրտ անեին ծավալելու համաշխարհային երկրորդ պատերազմը, նրանք կջախջախվեին պատերազմի հենց առաջին տարում։

Բայց ցավոք սրտի, այդ տեղի չունեցավ այն կորստաբեր քաղաքականության պատճառով, որն անց էին կացնում Ամերիկյան Միացյալ Նահանգները, Անգլիան և Ֆրանսիան ամբողջ նախապատերազմյան ժամանակաշրջանի ընթացքում։

Ահա թե ով է մեղավոր, որ հիտլերականները կարողացան ոչ առանց հաջողության ծավալել համաշխարհային երկրորդ պատերազմը, որը տևեց համարյա վեց տարի և խլեց միլիոնավոր զոհեր։

II

ՈՉ ԹԵ ՊԱՅՔԱՐ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ԴԵՄ, ԱՅԼ ՍՍՌՄ-Ն ՄԵԿՈՒՍԱՑՆԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Իրադարձությունների հետագա զարգացումը է՛լ ավելի պարզորոշ ցույց տվեց, որ Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարող շրջանները, իրենց զիջումներով և ընդառաջումներով ֆաշիստական պետություններին, որոնք 1936 թվին կազմել էին ռազմա-քաղաքական բլոկ, որ հայտնի է «Բեռլին—Հռոմ առանցք» անունով, միայն խրախուսում էին Գերմանիային և նրան հրում զավթումների ուղին։

Մերժելով կոլեկտիվ անվտանգության քաղաքականությունը, Անգլիան ու Ֆրանսիան անցան այսպես կոչված շմիջամտելու գիրքերը, որի մասին Ի. Վ. Ստալինը ասել է.

«...Շմիջամտելու քաղաքականությունը կարելի էր բնութագրել հետևյալ կերպ. «Թող յուրաքանչյուր երկիր ագրեսորներից պաշտպանվի ինչպես ուզում է և ինչպես կարող է. մեր գործը չէ, մենք առևտուր կանենք թե՛ ագրեսորների և թե՛ նրանց զոհերի հետ»։ Իրականում, սակայն, շմիջամտելու քաղաքականությունը նշանակում է ագրեսիայի թողտվություն, պատերազմի սանձազերծում, հետևաբար, նրա վերածումը համաշխարհային պատերազմի»[1]։

Ի. Վ. Ստալինը ըստ որում նշել է՝

«...Այն մեծ ու վտանգավոր քաղաքական խաղը, որ սկսեցին շմիջամտելու քաղաքականության կողմնակիցները, կարող է նրանց համար լուրջ ձախողումով վերջանալ»[2]։

---

1. *Համկ(բ)Պ 18-րդ համագումարի սղագրական հաշվետվություն, ՕԳԻԶ, 1939 թ., էջ 13։*

2. *Նույն տեղը, էջ 14։*

Արդեն 1937 թվին միանգամայն պարզ էր, թե գործը գնում է դեպի մեծ պատերազմ, որ Հիտլերը նյութում էր Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ուղղակի թողտվությամբ։

Գերմանիայի ջախջախումից հետո սովետական զորքերի գրավված գերմանական արտաքին գործերի մինիստրության փաստաթղթերը բացահայտում են Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի այդ ժամանակաշրջանի արտաքին քաղաքականության իսկական էությունը։ Ինչպես երևում է փաստաթղթերից, անգլո-ֆրանսիական քաղաքականության էությունը ոչ թե խաղաղասեր պետությունների ուժերի միավորումն էր՝ ագրեսիայի դեմ համատեղ պայքար մղելու համար, այլ՝ մեկուսացնել ՍՍՌՄ-ն և Հիտլերյան ագրեսիան ուղղել դեպի արևելք, Սովետական Միության դեմ, Հիտլերին որպես զենք օգտագործել իրենց նպատակների համար։

Ըստ որում, Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարողները շատ լավ գիտեին Հիտլերյան արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունը, մի քաղաքականություն, որ Հիտլերը բնորոշել էր հետևյալ կերպ.

«Մենք նացիոնալ-սոցիալիստներս, գիտակցաբար գիծ ենք քաշում նախապատերազմյան ժամանակի մեր արտաքին քաղաքականության ուղղության տակ։ Մենք սկսում ենք նրանից, որի վրա կանգ ենք առել վեց դար առաջ։ Մենք կանգնեցնում ենք գերմանացիների հավիտենական ձգտումը դեպի Եվրոպայի Հարավ ու Արևմուտք, և մեր հայացքն ուղղում ենք Արևելքի հողերի վրա։ Մենք, վերջապես, կապերը խզում ենք նախապատերազմյան ժամանակի գաղութային ու առևտրական քաղաքականությունից ու անցնում ապագայի տերիտորիալ քաղաքականությանը։ Բայց երբ մենք այժմ Եվրոպայում խոսում ենք նոր հողերի մասին, ապա մենք կարող ենք առաջին հերթին մտածել միայն Ռուսաստանի և նրան ենթակա սահմանամերձ պետությունների մասին։ Կարծես ինքը ճակատագիրն է մեզ ճանապարհ ցույց տալիս»[1]։

Մինչև վերջին ժամանակներս ընդունված էր համարել, որ դավաճանության մյունխենյան քաղաքականության ամբողջ պատասխանատվությունը ընկնում է Անգլիայի ու Ֆրանսիայի կառա-

---

1. Ա. Հիտլեր, «Մայն Կամպֆ», Մյունխեն, 1936 թ., էջ 742։

վարող շրջանների վրա, Չեմբերլենի և Դալադյեի կառավարությունների վրա։ Այն փաստը, որ ամերիկյան Կառավարությունը իր վրա է վերցրել գերմանական արխիվային նյութերի հրապարակումը, ըստ որում, ժողովածուից հանելով այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են մյունխենյան համաձայնությանը, վկայում է, որ ԱՄՆ-ի Կառավարությունը շահագրգռված է մյունխենյան դավաճանության հեղինակներին սպիտակ երես դուրս բերելու մեջ և, ըստ որում, ճգնում է մեղքը բարդել ՍՍՌՄ-ի վրա։

Անգլիայի ու Ֆրանսիայի մյունխենյան քաղաքականության հիմնական իմաստը արդեն առաջ էլ բավականաչափ պարզ էր։ Սովետական կառավարության ձեռքում եղած գերմանական արտաքին գործերի մինիստրության արխիվի փաստաթղթերը, սակայն, բազմաթիվ լրացուցիչ փաստեր են տալիս, որոնք բացահայտում են արևմտյան տերությունների նախապատերազմյան ժամանակաշրջանի դիվանագիտության իսկական իմաստը, ցույց տալով, թե ինչպես էին խաղում ժողովուրդների բախտի հետ, ինչպես անամոթաբար վաճառքի էին հանում ուրիշների տերիտորիաներ, ինչպես գաղտնի կերպով վերաձևվում էր աշխարհի քարտեզը, ինչպես խրախուսվում էր հիտլերյան ագրեսիան և թե ինչպիսի ջանքեր էին արվում այդ ագրեսիան դեպի արևելք՝ Սովետական Միության դեմ ուղղելու համար։

Այս բանը պերճախոս կերպով ցույց է տալիս, օրինակ, գերմանական այն փաստաթուղթը, որ պարունակում է Օբերզալցբերգում 1937 թվի նոյեմբերի 19-ին գերմանական արտաքին գործերի մինիստր ֆոն Նեյրատի ներկայությամբ Հիտլերի և անգլիական մինիստր Հալիֆաքսի միջև տեղի ունեցած զրույցի գրանցումը։

Հալիֆաքսը հայտարարել է, թե՝

«Ինքը (լորդ Հալիֆաքսը) և անգլիական կառավարության մյուս անդամները տոգորված են այն գիտակցությամբ, որ ֆյուրերը շատ բան է ձեռք բերել ո՛չ միայն բուն Գերմանիայում, այլ որ իր երկրում կոմունիզմի ոչնչացման հետևանքով նա փակել է վերջինիս ճանապարհը դեպի արևմտյան Եվրոպա և դրա համար էլ Գերմանիան իրավամբ կարող է Արևմուտքի բաստիոնը համարվել բոլշևիզմի դեմ»[1]։

---

1. «Օբերզալցբերգում 1937 թվի նոյեմբերի 19-ին արտաքին գործերի պ-ն ռայխամինիստրի ներկայությամբ ֆյուրերի ու ռայխսկանցլերի և լորդ Հալի-

Անգլիական պրեմիեր-մինիստր Չեմբերլենի անունից Հալիֆաքսը մատնացույց է արել այն, թե լիակատար հնարավորություն կա գտնելու նույնիսկ դժվարին պրոբլեմների լուծում, եթե Գերմանիային ու Անգլիային հաջողվի համաձայնության գալ նաև Ֆրանսիայի ու Իտալիայի հետ։

Հալիֆաքսը ասել է թե՝

«Չպետք է լինի այնպիսի տպավորություն, թե «Բեռլին—Հռոմ առանցքը» կամ թե Լոնդոնի ու Փարիզի միջև եղած լավ հարաբերությունները տուժում են գերմանա-անգլիական մերձեցման հետևանքով։ Այն բանից հետո, երբ գերմանա-անգլիական մերձեցման հետևանքով հող նախապատրաստվի, արևմտա-եվրոպական չորս մեծ տերությունները[1] պետք է համատեղ հիմք ստեղծեն, որի վրա կարող է հաստատվել տևական խաղաղություն Եվրոպայում։ Չորս տերություններից և ո՛չ մեկը ո՛չ մի դեպքում չպետք է դուրս մնա այդ համագործակցությունից, որովհետև հակառակ դեպքում վերջ չի տրվի ներկայիս անկայուն դրությանը»[2]։

Այսպիսով, Հալիֆաքսը անգլիական կառավարության անունից դեռևս 1937 թվին Հիտլերին առաջարկություն է արել «Բեռլին—Հռոմ առանցքի» հետ Անգլիայի, իսկ նրա հետ միասին նաև Ֆրանսիայի միացման մասին։

Սակայն, այդ առաջարկությանը Հիտլերը պատասխանում է մի հայտարարությամբ, թե չորս տերությունների միջև այդպիսի համաձայնությունը նրան թվում է շատ հեշտ, եթե խոսքը վերաբերում է բարի կամքին և միմյանց նկատմամբ սիրալիր վերաբերմունքին, բայց գործը կբարդանա, եթե Գերմանիան չդիտվի «որպես մի պետություն, որն այլևս իր վրա չի կրում Վերսալի պայմանագրի բարոյական և նյութական խարանը»։

Ի պատասխան դրա, Հալիֆաքսը, գրանցման համաձայն, հայտարարել է.

«Անգլիացիները ռեալիստներ են և, թերևս ավելի քան ուրիշները, համոզված են, որ Վերսալի դիկտատի սխալները

Ֆաքսի միջև տեղի ունեցած զրույցի գրանցումը», գերմանական արտաքին գործերի մինիստրության արխիվից։

1. Նկատի ունի Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան։
2. Տե՛ս «Զրույցի գրանցման» ցիտատը։

պետք է ուղղվեն։ Անգլիան անցյալում էլ միշտ իր ազդեցությունն է գործել այդ ռեալիստական իմաստով։ Նա նշեց Անգլիայի դերը Հռենոսյան մարզը ժամկետից շուտ էվակուացնելու, ռեպարացիոն հարցը լուծելու, ինչպես նաև Հռենոսյան մարզը ռեօկուպացնելու ժամանակ»[1]։

Հալիֆաքսի հետ Հիտլերի զրույցի հետագա դրանցումից երևում է, որ անգլիական կառավարությունը հավանություն է տվել Դանցիգը, Ավստրիան և Չեխոսլովակիան «ձեռք բերելու» Հիտլերյան պլաններին։ Հիտլերի հետ միասին քննարկելով զինաթափման հարցը Ազգերի Լիգայում, և նշելով, թե դրանք կարիք ունեն հետագա քննարկման, Հալիֆաքսը հայտարարել է.

«Մնացած բոլոր հարցերը կարելի է բնութագրել այն իմաստով, թե դրանք վերաբերում են եվրոպական կարգի փոփոխություններին, որոնք, հավանաբար, վաղ թե ուշ տեղի կունենան։ Այդ հարցերին են վերաբերում Դանցիգը, Ավստրիան ու Չեխոսլովակիան։ Անգլիան շահագրգռված է միայն այն բանում, որ այդ փոփոխությունները կատարվեն խաղաղ էվոլուցիայի միջոցով և որ հնարավոր լինի խուսափել այն մեթոդներից, որոնք կարող են պատճառել հետագա ցնցումներ, որ չէին ցանկանա ո՛չ ֆյուրերը, ո՛չ էլ մյուս երկրները»[2]։

Ինչպես երևում է, այս զրույցը զրուցակցի հասարակ տնտղումը, շոշափումը չէ, որ երբեմն հարկ է լինում քաղաքական անհրաժեշտությունից, այլ համաձայնություն, անգլիական կառավարության գաղտնի համաձայնությունը Հիտլերի հետ՝ վերջինիս ղավթողական ախորժակները ի հաշիվ երրորդ երկրների բավարարելու մասին։

Այդ կապակցությամբ, պետք է նշել անգլիական մինիստր Սայմոնի 1938 թվի փետրվարի 21-ի հայտարարությունը պառլամենտում, թե Մեծ Բրիտանիան երբեք Ավստրիային անկախության հատուկ երաշխիքներ չի տվել։ Դա ակնհայտ սուտ է, որովհետև այդպիսի-երաշխիքներ տրված էին Վերսալի և Սեն Ժերմենի պայմանագրերով։

Այն ժամանակ էլ բրիտանական պրեմիեր- մինիստր Չեմբեր-

---

1. Տե՛ս «Զրույցի գրանցման» ցիտատը։
2. Նույն տեղ։

լենը հայտարարեց, թե Ավստրիան չի կարող որևէ պաշտպանություն սպասել Ազգերի Լիգայի կողմից։

«Մենք չպետք է ջանանք,—հայտարարեց Չեմբերլենը,—մոլորության մեջ գցել մեզ և, առավել ևս, մենք չպետք է փոքր, թույլ ազգերին խաբենք այնպիսի հույսերով, թե նրանք Ազգերի Լիգայից պաշտպանություն կստանան ագրեսիայի դեմ, և որ կարելի կլինի համապատասխանորեն գործել, քանի որ մենք գիտենք թե նման որևէ բան չի կարող ձեռնարկվել»[1]։

Այսպես, բրիտանական քաղաքականության ղեկավարները Հիտլերին խրախուսում էին զավթողական գործողությունների։

Սովետական զորքերի կողմից Բեռլինում գրավված գերմանական արխիվում կա նաև Հիտլերի ու Գերմանիայում բրիտանական դեսպան Հենդերսոնի զրույցի գրանցումը, մի զրույց, որ տեղի է ունեցել Ռիբբենտրոպի ներկայությամբ, 1938 թվի մարտի 3-ին[2]։ Այդ զրույցի հենց սկզբում Հենդերսոնը ընդգծեց զրույցի վստահելի բնույթը, վերապահություն անելով, թե զրույցի բովանդակությունը չի հաղորդվելու ո՛չ ֆրանսիացիներին, ո՛չ բելգիացիներին, ո՛չ պորտուգալացիներին, ո՛չ իտալացիներին, որոնց միայն կասվի, թե զրույցը տեղի է ունեցել որպես Հալիֆաքսի ու Հիտլերի միջև կայացած բանակցությունների շարունակություն և նվիրված է եղել Գերմանիային ու Անգլիային վերաբերող հարցերին։

Այդ զրույցում, հանդես գալով անգլիական Կառավարության անունից, Հենդերսոնը ընդգծել է, թե

«Խոսքը վերաբերում է ո՛չ թե առևտրական գործարքին, այլ Գերմանիայի հետ անկեղծ ու արտադին բարեկամության հիմք դնելու փորձի, սկսած իրադրության բարելավումից և վերջացրած բարեկամական ըմբռնման նոր ոգու ստեղծմամբ»[3]։

Չառարկելով «Եվրոպան առանց Ռուսաստանի միավորելու»

---

1. «Թայմս», 23 փետրվարի 1938 թ., էջ 8։

2. Ֆյուրերի (ու ռայխսկանցլերը) և բրիտանական թագավորական դեսպանի զրույցի գրանցումը, զրույց, որ տեղի է ունեցել Բեռլինում, 1938 թվի մարտի 3-ին, արտաքին գործերի ռայխսմինիստր ֆոն Ռիբբենտրոպի ներկայությամբ», գերմանական արտաքին գործերի մինիստրության արխիվից։

3. Նույն տեղ։

մասին Հիտլերի պահանջին, Հենդերսոնը հիշեցրել է, թե Հալիֆաքսը, որն այդ ժամանակ դարձել էր արտաքին գործերի մինիստրը, արդեն համաձայնվել է այն տերիտորիալ փոփոխությունների հետ, որ Գերմանիան մտադիր է կատարել Եվրոպայում, և որ

«Անգլիական առաջարկության նպատակն է՝ մասնակցել այդպիսի ողջամիտ կարգավորման»։

Այդ նույն զրույցում Հենդերսոնը, ինչպես արձանագրված է գրանցման մեջ, հայտարարել է, թե Չեմբերլենը

«մեծ արիություն ցույց տվեց, երբ, ոչ մի բանի վրա ուշադրություն չդարձնելով, պոկեց այնպիսի ինտերնացիոնալ ֆրազների դիմակը, ինչպիսին կոլեկտիվ անվտանգությունն է, և այլն...»։

«...Դրա համար էլ,— ավելացրել է Հենդերսոնը,— Անգլիան հայտարարում է, որ ինքը պատրաստ է վերացնելու բոլոր դժվարությունները և Գերմանիային հարցնում է, թե նա իր կողմից պատրա՞ստ է արդյոք նույն բանն անելու»։

Երբ զրույցին միջամտել է Ռիբբենտրոպը, Հենդերսոնի ուշադրությունը հրավիրելով այն բանի վրա, թե Վիեննայի անգլիական դեսպանորդը «դրամատիկ» ձևով ֆոն Պապենին հայտարարություն է արել Ավստրիայի իրադարձությունների առթիվ, Հենդերսոնը շտապել է սահմանազատվել իր կոլեգայի հայտարարությունից, ասելով, թե «ինքը, Նեվիլ Հենդերսոնը, հաճախ արտահայտվել է հօգուտ անշլյուսի»։

Այսպես է եղել նախապատերազմյան ժամանակաշրջանի անգլիական դիվանագիտական լեզուն։

Այդ համաձայնությունից անմիջապես հետո, 1938 թվի մարտի 12-ին, Հիտլերն արդեն զավթեց Ավստրիան, ոչ մի ընդդիմադրության չհանդիպելով Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից։ Այդ պահին միայն Սովետական Միությունը բարձրացրեց իր նախազգուշացնող ձայնը և նորից դիմեց, կոչ անելով կազմակերպել այն երկրների անկախության կոլեկտիվ պաշտպանությունը, որոնց սպառնում էր ագրեսիան։ Դեռևս 1938 թվի մարտի 17-ին Սովետական Կառավարությունը նոտա ուղարկեց տերություններին՝ պատրաստակամություն հայտնելով «մյուս տերությունների

1. Նույն տեղ։

հետ միասին, Ազգերի Լիգայում կամ նրանից դուրս, անհապաղ սկսել այն գործնական միջոցառումների քննարկումը», որոնք «նպատակ ունենային կանգնեցնելու ագրեսիայի հետագա զարգացումը և վերացնելու նոր համաշխարհային սպանդի ուժեղացած վտանգը»[1]։ Սովետական նոտային տրված անգլիական Կառավարության պատասխանը վկայում էր, որ անգլիական Կառավարությունը չէր ցանկանում խոշընդոտներ հարուցել Հիտլերյան ագրեսիայի այդ պլաններին։

Նա ասում էր, թե կոնֆերանսը

«Ագրեսիայի դեմ համաձայնեցված գործողություններ ընդունելու համար, Նորին Մեծության կառավարության կարծիքով, ոչ անպայման բարենպաստ ազդեցություն կգործի եվրոպական խաղաղության հեռանկարների վրա»[2]։

Գերմանական ագրեսիայի և պատերազմի նախապատրաստման շղթայի հետևյալ օղակը Եվրոպայում Չեխոսլովակիայի զավթումն էր Գերմանիայի կողմից։ Եվրոպայում պատերազմի հրահրման այդ կարևորագույն քայլն էլ Հիտլերը կարող էր իրագործել միայն Անգլիայի ու Ֆրանսիայի ուղղակի պաշտպանությամբ։

Դեռևս 1938 թվի հուլիսի 10-ին Լոնդոնի գերմանական դեսպան Դիրքսենը հաղորդել էր Բեռլին, թե անգլիական կառավարությունը՝

«Գերմանիայի հետ փոխզիջողության որոնումները դարձրել է իր ծրագրի ամենաէական կետերից մեկը» և որ «ներկայիս Կառավարությունը Գերմանիայի վերաբերմամբ ցուցաբերում է այնպիսի առավելագույն ըմբռնում, որպիսին կարող է միայն ցուցաբերել անգլիական քաղաքագետների որևէ հնարավոր կոմբինացիաներից մեկը»[3]։

Դիրքսենը գրում էր, թե անգլիական կառավարությունը—

Մոտեցել է այն հիմնական պահանջների առավել կարևոր

---

1. «Իզվեստիա», 18 մարտի 1938 թ.։

2. Բրիտանական արտաքին գործերի մինիստրության 1938 թ. մարտի 24-ի նոտան։

3. «1938 թ. հուլիսի 10-ի քաղաքական զեկուցումը ի լրացումն ս. թ. հունիսի 10-ի Ա. № 2589 զեկուցագրի», գերմանական արտաքին գործերի մինիստրության արխիվից։

կետերի ընդունմանը, որոնք Գերմանիան առաջադրել է Սովետական Միությունը Եվրոպայի ճակատագրի լուծումից հեռացնելու, այդ նույն իմաստով Ազգերի Լիգան հեռացնելու, երկկողմանի բանակցությունների և պայմանագրերի նպատակահարմարության մասին»։

Դիրքսենը Բեռլինին հաղորդում է նաև, թե անգլիական Կառավարությունը պատրաստ է մեծ զոհողություններ կատարելու հանուն «Գերմանիայի մյուս արդարացի պահանջների բավարարման»։

Այսպիսով անգլիական Կառավարության և Հիտլերի միջև իրոք հաստատվեց արտաքին քաղաքական պլաններում շատ հեռուն գնացող համաձայնություն, որի մասին այնպես արտահայտիչ կերպով հաղորդում էր Դիրքսենը Բեռլին ուղարկած իր զեկուցագրում։

Հարկ չկա հիշեցնելու բոլորին հայտնի փաստերը, որոնք արդեն անմիջականորեն վերաբերում են մյունխենյան գործարքին։ Բայց չի կարելի մոռանալ, որ 1938 թվի սեպտեմբերի 19-ին, այսինքն Հիտլերի և Չեմբերլենի տեսակցությունից չորս օր հետո, որն այդ նպատակի համար ժամանել էր Հիտլերի Բերխտեսգադեն նստավայրը, բրիտանական և ֆրանսիական Կառավարությունների ներկայացուցիչները, չեխոսլովակյան Կառավարությունից պահանջեցին Գերմանիային հանձնել չեխոսլովակյան այն շրջանները, որտեղ գլխավորապես ապրում էին սուդետյան գերմանացիներ։ Նրանք այդ պատճառաբանում էին նրանով, որ առանց դրանք իբր թե հնարավոր չէ խաղաղություն պահպանել և ապահովել Չեխոսլովակիայի կենսական շահերը։ Հիտլերյան ագրեսիայի անգլո-ֆրանսիական հովանավորողները իրենց դավաճանությունը փորձում էին կոծկել չեխոսլովակյան պետության նոր սահմանների միջազգային երաշխավորման խոստումով, որպես ավանդ Եվրոպայի խաղաղացման գործում»[1]։

Սեպտեմբերի 20-ին չեխոսլովակյան Կառավարությունը պատասխանեց անգլո-ֆրանսիական առաջարկություններին։ Չեխո-

---

1. *Correspondence respecting Czechoslovakia, September, 1938 London, 1938, etd 5847, p. 8—9,* Չեխոսլովակիային վերաբերող նամակագրություն, 1938 թ. սեպտեմբեր, էջ 8—9, Լոնդոն։

սլովակյան Կառավարությունը հայտարարեց, թե «այդպիսի բնույթի առաջարկությունների ընդունումը հավասարազոր կլիներ պետության կամավոր և լիակատար անդամահատմանը բոլոր ուղղություններով»։ Չեխոսլովակյան կառավարությունը անգլիական և ֆրանսիական կառավարությունների ուշադրությունը հրավիրում էր այն բանի վրա, թե «Չեխոսլովակիայի կաթվածահարությունը քաղաքական խոր փոփոխություններ առաջ կբերի ամբողջ Միջին և Հարավ-Արևելյան Եվրոպայում»։

«Ուժերի հավասարակշռությունը Միջին Եվրոպայում և ընդհանրապես Եվրոպայում,— հայտարարում էր չեխոսլովակյան կառավարությունը իր պատասխանի մեջ,— ոչընչացված կլիներ. դա շատ հեռուն գնացող հետևանքներ առաջ կբերեր մնացած բոլոր պետությունների և հատկապես Ֆրանսիայի համար»։

Չեխոսլովակյան կառավարությունը դիմում էր Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարություններին՝ «վերջին անգամ կոչ անելով» վերանայել իրենց տեսակետը, ընդգծելով, որ դա շահավետ է ո՛չ միայն Չեխոսլովակիային, այլև նրա բարեկամներին, շահավետ է «խաղաղության ամբողջ գործի և Եվրոպայի առողջ զարգացման գործի համար»։

Անգլո-ֆրանսիական կառավարությունները մնում էին անողոք։ Հաջորդ օրը անգլիական Կառավարությունը չեխոսլովակյան կառավարությանը պատասխան նոտա ուղարկեց, առաջարկելով ետ վերցնել անգլո-ֆրանսիական սկզբնական առաջարկություններին տված իր պատասխանը և «շտապ ու լուրջ կշռադատել» նախքան այնպիսի իրադրություն ստեղծելը, որի համար անգլիական Կառավարությունը չէր կարող պատասխանատվությունը վերցնել իր վրա։ Վերջում անգլիական Կառավարությունը ընդգծում էր, թե ինքը չի կարող հավատալ որ արբիտրաժի վերաբերյալ չեխոսլովակյան նախագիծն այժմ ընդունելի լինի։ Նա չի կարող ենթադրել, նշվում էր անգլիական այդ նոտայում, որ «գերմանական կառավարությունը իրադրությունը համարեր այնպիսին, ինչպիսին կարելի լիներ լուծել արբիտրաժով, ինչպես այդ առաջարկում է չեխոսլովակյան կառավարությունը»։

Վերջում անգլիական նոտան սպառնալից տոնով նախազգուշացնում էր չեխոսլովակյան կառավարությանը, թե անգլիական

խորհուրդը մերժելու դեպքում չեխոսլովակյան կառավարությունը պետք է ազատություն ունենա ամեն տեսակ գործողությունների, որոնք նա համապատասխան կհամարի այն իրադրությանը, որ կարող էր ստեղծվել ավելի ուշ»։

1938 թվի սեպտեմբերի 29—30-ին Մյունխենում տեղի ունեցած Հիտլերի, Չեմբերլենի, Մուսսոլինիի և Դալադյեի խորհրդակցությունը հանդիսացավ այդ ամոթալի գործարքի ավարտումը, որը դեռ նախօրոք ամբողջովին համաձայնեցված էր խաղաղության դեմ սարքված դավադրության հիմնական մասնակիցների միջև։ Չեխոսլովակիայի ճակատագիրը որոշված էր առանց նրա որևէ մասնակցության։ Չեխոսլովակիայի ներկայացուցիչներին Մյունխեն հրավիրեցին միայն նրա համար, որպեսզի նրանք հլու-հնազանդ սպասեին իմպերիալիստների դատավարության արդյունքներին։

Անգլիայի ու Ֆրանսիայի ամբողջ վարքագիծը ոչ մի տարակույս չէր թողնում, որ Չեխոսլովակյան ժողովրդի և նրա ռեսպուբլիկայի վերաբերմամբ անգլիական ու ֆրանսիական կառավարությունների դավաճանության չլսված ակտը պատահական էպիզոդ չէր այդ պետությունների քաղաքականության մեջ, այլ հանդիսանում էր այդ քաղաքականության կարևորագույն օղակը, մի քաղաքականություն, որն իրեն նպատակ էր դրել հիտլերյան ագրեսիան ուղղել Սովետական Միության դեմ։

Մյունխենի դավադրության իսկական իմաստը հենց այն ժամանակ էլ մերկացվեց Ի. Վ. Ստալինի կողմից, որն ասաց. թե «Չեխոսլովակիայի շրջանները գերմանացիներին տվին որպես վճար Սովետական Միության դեմ պատերազմ սկսելու պարտավորության համար»[1]։

Անգլո-ֆրանսիական կառավարող շրջանների այդ ամբողջ քաղաքականության էությունը այդ ժամանակաշրջանում բացահայտված է 1939 թվի մարտին Համկ(բ)Պ 18-րդ համագումարում Ի. Վ. Ստալինի ասած հետևյալ խոսքերում.

«Զմիջամտելու քաղաքականությունը,— ասել է Ի. Վ. Ստալինը,— նշանակում է ագրեսիայի թողտվություն,

---

1. Համկ(բ)Պ 18-րդ համագումար, սղագրական հաշվետվություն, ՕԳԻԶ, 1939, էջ 14։

պատերազմի սանձազերծում,— հետևաբար, նրա վերածումը համաշխարհային պատերազմի։ Զմիջամտելու քաղաքականության մեջ ձգտում, ցանկություն է նկատվում՝ չխանգարել ագրեսորներին իրենց սև գործը կատարելու, չխանգարել, ասենք, Ճապոնիային՝ պատերազմի բռնվելու Չինաստանի դեմ, իսկ է՛լ ավելի լավ է՝ Սովետական Միության դեմ, չխանգարել, ասենք՝ Գերմանիային՝ խրվելու եվրոպական գործերի մեջ, պատերազմի բռնվելու Սովետական Միության դեմ, պատերազմի բոլոր մասնակիցներին հնարավորություն տալ խորը խրվելու պատերազմի ճահճուտը, գաղտագողի խրախուսել նրանց այդ բանում, թույլ տալ, որ նրանք թուլացնեն և հյուծեն միմյանց, իսկ հետո, երբ նրանք բավականաչափ կթուլանան,— թատերաբեմ ելնել թարմ ուժերով, հանդես գալ, իհարկե, «հօգուտ խաղաղության շահերի», և պատերազմի թուլացած մասնակիցներին թելադրել իր պայմանները»[1]։

Տարբեր երկրների, այդ թվում Ամերիկայի Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դեմոկրատական շրջանների մեջ Մյունխենյան համաձայնությունը ընդունվեց զայրույթով և վճռական դատապարտումով։ Անգլո-ֆրանսիական կառավարողների Մյունխենյան դավաճանության նկատմամբ այդ շրջանների վերաբերմունքի մասին կարելի է դատել թեկուզ այնպիսի արտահայտություններով, ինչպես, օրինակ, ԱՄՆ-ում լույս տեսած Սեյերսի և Կանի «Գաղտնի պատերազմը ընդդեմ Սովետական Ռուսաստանի» գրքում եղած արտահայտություններն են։ Ահա ինչ են գրել այդ գրքի հեղինակները Մյունխենի մասին.

«Նացիստական Գերմանիայի, ֆաշիստական Իտալիայի, Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարությունները ստորագրեցին Մյունխենի համաձայնագիրը,—իրականացավ հակասովետական «Սրբազան դաշինքի» վերաբերյալ իդեան, որ համաշխարհային ռեակցիան փայփայում էր դեռևս 1918 թվից։ Համաձայնությունը Ռուսաստանը թողեց առանց դաշնակիցների։ Ֆրանս-սովետական պակտը՝ Եվրոպայի

---

1. Համկ(բ)Պ 18-րդ համագումար, սղագրական հաշվետվություն, ՕԳԻԶ, 1939 թ., էջ 13։

կոլեկտիվ անվտանգության անկյունաքարը՝ թաղվեց։ Չեխական սուդետները դարձան նացիստական Գերմանիայի մի մասը։ Հիտլերյան հրոսակախմբերի առաջ լայնորեն բացվեցին Արևելք տանող դարպասները»[1]։

Բոլոր մեծ տերություններից միայն Սովետական Միությունը Չեխոսլովակյան ողբերգության բոլոր էտապներում ակտիվորեն հանդես էր գալիս ի պաշտպանություն Չեխոսլովակիայի անկախության և ազգային իրավունքների։ Փորձելով արդարանալ հասարակական կարծիքի առաջ, Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարությունները կեղծավոր կերպով հայտարարում էին, որ նրանք իբր թե չգիտեն, որ Սովետական Միությունը կկատարի՞ արդյոք իր պարտավորությունները Չեխոսլովակիայի հանդեպ, որոնք բխում են փոխադարձ օգնության պայմանագրից։ Բայց նրանք բացահայտ անճշտություն էին ասում, որովհետև Սովետական Կառավարությունը հրապարակով հայտարարեց իր պատրաստակամությունը՝ հանդես գալ հօգուտ Չեխոսլովակիայի՝ ընդդեմ Գերմանիայի՝ համապատասխան այդ պայմանագրի պայմանների, որոնք պահանջում էին, որ Ֆրանսիան էլ միաժամանակ հանդես գար ի պաշտպանություն Չեխոսլովակիայի։ Բայց Ֆրանսիան հրաժարվեց կատարել իր պարտքը։

Չնայած դրան, Մյունխենի գործարքի նախօրյակին Սովետական Կառավարությունը նորից հայտարարեց, որ ինքը արտահայտվում է հօգուտ միջազգային կոնֆերանսի հրավիրման՝ Չեխոսլովակիային գործնական օգնություն ցույց տալու և խաղաղությունը պահպանելու գործնական միջոցառումներ ընդունելու համար։

Երբ Չեխոսլովակիայի զավթումը փաստ դարձավ և իմպերիալիստական երկրների կառավարությունները մեկը մյուսի ետևից հայտարարեցին կատարված փաստը ճանաչելու մասին, Սովետական Կառավարությունը մարտի 18-ի իր նոտայում Չեխոսլովակիայի զավթումը, որ հիտլերյան Գերմանիան կատարել էր Անգլիայի ու Ֆրանսիայի աջակցությամբ, որակեց որպես կամայականության, բռնության, ագրեսիայի ակտ։ Այդ նույն նոտայում Սովետական Կառավարությունն ընդգծում էր, թե Գերմանիայի

1. Մ. Սեյերս և Ա. Կան, «Գաղտնի պատերազմը ընդդեմ Սովետական Ռուսաստանի», 1946 թ., Բոստոն, էջ 324—325։

գործողությունները ստեղծել և ուժեղացրել են ընդհանուր խաղաղության սպառնալիքը, «խախտել քաղաքական կայունությունը Միջին Եվրոպայում, ավելացրել են Եվրոպայում դեռ նախքան այդ ստեղծված տագնապի վիճակի տարրերը և նոր հարված հասցրե ժողովուրդների անվտանգության զգացմունքին»[1]։

Գործը չսահմանափակվեց Չեխոսլովակիան Հիտլերին հանձնելով։ Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարությունները մեկը մյուսի ետևից շտապեցին քաղաքական լայն համաձայնագիր ստորագրել հիտլերյան Գերմանիայի հետ։ 1938 թվի սեպտեմբերի 30-ին Մյունխենում Չեմբերլենը և Հիտլերը ստորագրեցին անգլո-գերմանական դեկլարացիա, որի մեջ ասված էր.

«Մենք այսօր շարունակեցինք մեր զրույցը և միահամուռ կերպով եկանք այն համոզման, որ գերմանա-անգլիական հարաբերությունների հարցն առաջնակարգ նշանակություն ունի երկու երկրների և Եվրոպայի համար։ Մենք երեկ երեկոյան ստորագրված համաձայնագիրը և գերմանա-անգլիական ծովային համաձայնագիրը դիտում ենք որպես մեր երկու ժողովուրդների ցանկության սիմվոլ՝ այլևս երբեք պատերազմ չմղել միմյանց դեմ։ Մենք լի ենք վճռականությամբ՝ կոնսուլտացիայի միջոցով քննելու նաև մեր երկու երկրներին վերաբերող մյուս հարցերը, և ձգտել հետագայում վերացնելու տարաձայնության ամեն տեսակ առիթներ, այդպիսով նպաստելով խաղաղության ապահովմանը Եվրոպայում»[2]։

Դա Անգլիայի ու Գերմանիայի դեկլարացիան էր փոխադարձ հարձակման մասին։

1938 թվի դեկտեմբերի 6-ին ստորագրվեց Բոննե—Ռիբբենտրոպի ֆրանս-գերմանական դեկլարացիան, համանման անգլո-գերմանականին։ Այդ դեկլարացիայում հայտարարվում էր, թե գերմանական և ֆրանսիական կառավարությունները միահամուռ կերպով եկել են այն համոզման, որ Գերմանիայի ու Ֆրանսիայի

---

1. «Իզվեստիա», 20 մարտի 1939 թ.։
2. Արտաքին քաղաքականության և երկրագիտության արխիվ, էջ 483։
«Archiv für Aussenpolitike und Länderkumde», September, 1938, S. 483.

միջև խաղաղ ու բարի-դրացիական հարաբերությունները հանդիսանում են Եվրոպայում հարաբերությունների կոնսոլիդացիայի ու ընդհանուր խաղաղության պահպանման ամենաէական նախադրյալներից մեկը և որ երկու կառավարությունները ամեն ջանք գործ կդնեն, որպեսզի ապահովեն այդպիսի հարաբերությունների պահպանումը իրենց երկրների միջև։ Դեկլարացիան նշում էր, թե Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև այլևս չկա տերիտորիալ բնույթի ոչ մի վիճելի հարց և որ իրենց երկրների միջև գոյություն ունեցող սահմանը հանդիսանում է վերջնական։ Դեկլարացիան վերջում հայտարարում էր, թե երկու կառավարությունները հաստատ որոշում են, շշոշափելով երրորդ տերությունների հետ իրենց հատուկ հարաբերությունները, միմյանց հետ կապ պահպանել իրենց երկրներին վերաբերող բոլոր հարցերում և իրար հետ խորհրդակցել այն դեպքում, եթե այդ հարցերը իրենց հետագա զարգացման մեջ միջազգային բարդություններ առաջ կբերեն։

Դա Ֆրանսիայի ու Գերմանիայի դեկլարացիան էր փոխադարձ չհարձակման մասին։

Ըստ էության այդ համաձայնագրերի կնքումը նշանակում էր, որ թե՛ Անգլիան և թե՛ Ֆրանսիան Հիտլերի հետ ստորագրել են չհարձակման պակտեր։

Հիտլերյան Գերմանիայի հետ կնքած այդ համաձայնագրերում միանգամայն պարզ երևան է գալիս անգլիական և ֆրանսիական կառավարությունների ձգտումը՝ իրենցից հեռացնել հիտլերյան ագրեսիայի սպառնալիքը, հույս ունենալով, որ մյունխենյան և այլ նման համաձայնագրերը հիտլերյան ագրեսիայի համար արդեն բաց են արել դարպասները դեպի Արևելք, դեպի Սովետական Միություն։

Այսպիսով ստեղծվեցին «Եվրոպան առանց Ռուսաստանի միավորելու» համար անհրաժեշտ քաղաքական պայմաններ։

Գործը վերաբերում էր Սովետական Միության լիակատար մեկուսացմանը։

III

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄԸ։ ՍՈՎԵՏԱ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՉՇԱՐՁԱԿՄԱՆ ՊԱԿՏԸ

Չեխոսլովակիան զավթելուց հետո ֆաշիստական Գերմանիան սկսեց պատերազմի պատրաստվել արդեն միանգամայն բացահայտ կերպով, ամբողջ աշխարհի աչքի առաջ։ Հիտլերը, Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից խրախուսված, այլևս չէր քաշվում և չէր ձևանում եվրոպական պրոբլեմների խաղաղ կարգավորման կողմնակից։ Սկսվեցին նախապատերազմյան ժամանակաշրջանի ամենադրամատիկ ամիսները։ Այն ժամանակ արդեն պարզ էր, որ յուրաքանչյուր օրը մարդկությանը մոտեցնում էր չտեսնված պատերազմական կատաստրոֆի։

Իսկ ինչպե՞ս էր այն ժամանակ մի կողմից Սովետական Միության քաղաքականությունը և, մյուս կողմից, Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի քաղաքականությունը։

Այս հարցին պատասխանելուց խուսափելու փորձը, որ ձեռնարկել են պատմության կեղծարարներն Միացյալ Նահանգներում, վկայում է միայն նրանց անմաքուր խղճի մասին։

Ճշմարտությունն այնպես է, որ Անգլիան ու Ֆրանսիան, ԱՄՆ-ի կառավարող շրջանների պաշտպանությամբ, 1939 թվի դարնան ու ամռան ճակատագրական ժամանակաշրջանում, երբ պատերազմը կանգնել էր դռան շեմքին, շարունակում էին իրենց քաղաքականության նախկին գիծը։ Դա հիտլերյան Գերմանիային պրովոկացիոն կերպով Սովետական Միության դեմ լարելու քաղաքականություն էր, որ խաբեության համար քողարկված էր ո՛չ միայն Սովետական Միության հետ համագործակցելու պատրաստա-

կամության փարիսեցիական ֆրազներով, այլև, ինչ-որ ոչ-բարդ դիվանագիտական մանևրներով, որոնք կոչված էին ժողովուրդների հասարակական կարծիքից թաքցնելու անցկացվող քաղաքական կուրսի իսկական բնույթը։

Այդպիսի մանևրներ հանդիսացան ամենից առաջ 1939 թվի բանակցությունները, որոնք Անգլիան ու Ֆրանսիան որոշել էին սկսել Սովետական Միության հետ։ Հասարակական կարծիքը խաբելու համար անգլո-ֆրանսիական կառավարող շրջանները փորձում էին այդ բանակցությունները պատկերացնել որպես հիտլերյան ագրեսիայի հետագա տարածմանը խոչընդոտ հարուցելու լուրջ փորձ, սակայն իրադարձությունների հետագա ամբողջ ընթացքի լույսի տակ միանգամայն պարզ դարձավ, որ անգլո-ֆրանսիական կողմի համար այդ բանակցությունները հենց սկզբից հանդիսացել են միայն հերթական քայլ՝ իրենց երկակի խաղի մեջ։

Այդ բանը պարզ էր նաև հիտլերյան Գերմանիայի ղեկավարներին, որոնց համար Սովետական Միության հետ Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարությունների սկսած բանակցությունների իմաստը, բնականաբար, գաղտնիք չէր։ Ահա թե, օրինակ, այդ մասին ինչ է գրել Լոնդոնի գերմանական դեսպան Դիրքսենը 1939 թվի օգոստոսի 3-ին գերմանական արտաքին գործերի մինիստրությանը ներկայացրած զեկուցագրում, ինչպես այդ մասին վկայում են հիտլերյան Գերմանիային ջախջախելու ժամանակ Սովետական Բանակի գրաված փաստաթղթերը.

«Այստեղ տիրում է այն տպավորությունը, թե վերջին ամիսների ընթացքում մյուս պետությունների հետ ծագած կապերը սոսկ ռեզերվային միջոց են Գերմանիայի հետ իսկական հաշտության հանգելու համար և որ այդ կապերը կվերանան հենց որ ձեռք բերվի միակ կարևոր և թափած ջանքերին արժանի նպատակը՝ համաձայնությունը Գերմանիայի հետ»։

Այս կարծիքը հաստատ բաժանում էին գերմանական բոլոր դիվանագետները, որոնք հետևում էին Լոնդոնի իրադրությանը։

Բեռլին ուղարկած իր մի ուրիշ գաղտնի զեկուցագրում Դիրքսենը գրել է.

«Անգլիան ուզում է սպառազինվելու և դաշնակիցներ ձեռք բերելու միջոցով ուժեղանալ և հավասարվել առանց-

քին, բայց միևնույն ժամանակ նա ուզում է բանակցությունների միջոցով փորձել սիրալիր համաձայնության հանգել Գերմանիայի հետ»[1]։

Զրպարտիչները և պատմության կեղծարարները աշխատում են թաքցնել այդ փաստաթղթերը, որովհետև դրանք վառ լույս են սփռում նախապատերազմյան վերջին ամիսների իրադրության վրա, առանց որի ճիշտ գնահատման չի կարելի հասկանալ պատերազմի իսկական նախապատմությունը։ Բանակցություններ տանելով Սովետական Միության հետ և երաշխիքներ տալով Լեհաստանին, Ռումինիային ու մի քանի այլ պետությունների, Անգլիան ու Ֆրանսիան, ԱՄՆ-ի կառավարող շրջանների օժանդակությամբ երկակի խաղ էին խաղում, որի նպատակն էր համաձայնության հանգել Հիտլերյան Գերմանիայի հետ՝ նրա ագրեսիան դեպի Արևելք, Սովետական Միության դեմ ուղղելու համար։

Մի կողմից Անգլիայի ու Ֆրանսիայի և մյուս կողմից Սովետական Միության միջև բանակցություններն սկսվեցին 1939 թվի մարտին ու տևեցին մոտ չորս ամիս։

Այդ բանակցությունների ամբողջ ընթացքը ամենայն ակնհայտությամբ ցույց տվեց, որ այն ժամանակ, երբ Սովետական Միությունը ձգտում էր լայն ու իրավահավասար համաձայնության հանգել արևմտյան տերությունների հետ, մի համաձայնություն, որն ընդունակ լիներ, թեկուզ վերջին պահին, Գերմանիային ետ կանգնեցնել Եվրոպայում պատերազմը սանձազերծելուց, Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարությունները, որոնք հենվում էին Միացյալ Նահանգների պաշտպանության վրա, դնում էին միանգամայն այլ նպատակներ։ Անգլո-ֆրանսիական կառավարող շրջանները, որոնք սովորել են կրակի միջից շագանակ հանել ուրիշի ձեռքով, այս անգամ էլ փորձեցին Սովետական Միության վզին փաթաթել այնպիսի պարտավորություններ, որոնց ուժով ՍՍՌՄ-ն իր վրա վերցներ Հիտլերյան հնարավոր ագրեսիան ետ մղելու զոհերի ամբողջ ծանրությունը, իսկ Անգլիան ու Ֆրանսիան իրենց ամենևին չէին կաշկանդում Սովետական Միության նկատմամբ որևէ պարտավորությամբ։

---

1. Դիրքսենի գրությունը «Լոնդոնում իմ ծառայած ժամանակ Գերմանիայի և Անգլիայի միջև քաղաքական հարաբերությունների զարգացման մասին», կազմված 1939 թ. սեպտեմբերին։

Եթե անգլո-ֆրանսիական կառավարողներին հաջողվեր այդ մանևրը, նրանք զգալի չափով կմոտենային իրենց հիմնական նպատակի կենսագործմանը, որը հետևյալն էր՝ որքան կարելի է ավելի շուտ ճակատ-ճակատի զարնել Գերմանիային ու Սովետական Միությանը։ Սակայն այդ դիտավորությունը կռահեց Սովետական Միությունը, որը բանակցությունների բոլոր էտապներում արևմտյան տերությունների դիվանագիտական տրյուկներին ու մեքենայություններին հակադրում էր իր բացահայտ ու պարզորոշ առաջարկությունները, որոնք կոչված էին ծառայելու մեկ նպատակի՝ խաղաղության պաշտպանության գործին Եվրոպայում։

Հարկ չկա հիշեցնելու այդ բանակցությունների ամբողջ անցուդարձը։ Անհրաժեշտ է հիշողության մեջ վերականգնել միայն մի քանի կարևորագույն մոմենտներ։ Բավական է հիշեցնել այն պայմանները, որոնք Սովետական Կառավարությունն առաջադրել էր այդ բանակցությունների ժամանակ՝ Անգլիայի, Ֆրանսիայի և ՍՍՌՄ-ի միջև կնքել ագրեսիայի դեմ ուղղված փոխադարձ օգնության էֆեկտիվ պակտ. Անգլիայի, Ֆրանսիայի և ՍՍՌՄ-ի կողմից երաշխավորել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տերություններին, դրանց թվում առանց բացառության ներառյալ ՍՍՌՄ-ին սահմանակից եվրոպական բոլոր երկրները. ռազմական կոնկրետ համաձայնագիր կնքել Անգլիայի, Ֆրանսիայի ու ՍՍՌՄ-ի միջև, ագրեսորների հարձակման դեպքում միմյանց ու երաշխավորված պետություններին անհապաղ ու էֆեկտիվ օգնություն ցույց տալու ձևերի և չափերի մասին[1]։

ՍՍՌՄ Գերագույն Սովետի երրորդ սեսիայում 1939 թվի մայիսի 31-ին Վ. Մ. Մոլոտովը նշում էր, որ այդ բանակցությունների ժամանակ ներկայացված անգլո-ֆրանսիական մի քանի առաջարկությունների մեջ բացակայում էր փոխադարձության և հավասար պարտականությունների տարրական սկզբունքը, որ պարտադիր է ամեն տեսակ իրավահավասար համաձայնագրերում։

«Ագրեսորների ուղղակի հարձակումից իրենց երաշխավորելով իրենց ու Լեհաստանի միջև կնքված փոխադարձ օգնության

---

1. Տե՛ս Վ. Մ. Մոլոտովի զեկուցումը ՍՍՌՄ Գերագույն Սովետի 3-րդ սեսիայում, 1939 թ. մայիսի 31-ին։

պակտերով,—ասում էր Վ. Մ. Մոլոտովը,—և իրենց համար ապահովելով ՍՍՌՄ-ի օգնությունը՝ ագրեսորների կողմից Լեհաստանի ու Ռումինիայի վրա հարձակվելու դեպքում, անգլիացիներն ու ֆրանսիացիները առկախ էին թողել այն հարցը, թե ՍՍՌՄ-ն իր հերթին կարո՞ղ էր օգնություն սպասել նրանցից ագրեսորների կողմից իր վրա ուղղակի հարձակում կատարվելու դեպքում, ինչպես և առկախ էին թողել մի ուրիշ հարց՝ կարո՞ղ են նրանք արդյոք մասնակցել ՍՍՌՄ-ին սահմանակից փոքր պետությունների երաշխավորմանը, որոնք գտնվում են ՍՍՌՄ հյուսիս-արևմտյան սահմաններին, եթե նրանք ի վիճակի չլինեն իրենց շեզոքությունը պահպանել ագրեսորների հարձակումից։ Այսպիսով, անհավասար դրություն էր ստացվում ՍՍՌՄ-ի համար»։

Նույնիսկ, երբ անգլո-ֆրանսիական ներկայացուցիչներն սկսեցին խոսքով համաձայնվել Անգլիայի, Ֆրանսիայի ու ՍՍՌՄ-ի միջև փոխադարձ օգնության սկզբունքին, փոխադարձության պայմաններով՝ ագրեսորի ուղղակի հարձակման դեպքում, նրանք այդ բանը պայմանավորեցին մի շարք այնպիսի վերապահումներով, որոնք այդ համաձայնությունը դարձնում էին ֆիկտիվ։

Բացի դրանից, անգլո-ֆրանսիական առաջարկությունները նախատեսում էին ՍՍՌՄ-ի կողմից օգնություն այն երկրներին, որոնց անգլիացիներն ու ֆրանսիացիները երաշխավորության խոստում էին տվել, բայց նրանք ոչինչ չէին ասում իրենց օգնության մասին ՍՍՌՄ-ի հյուսիս-արևմտյան սահմանագլխի երկրներին՝ Մերձբալթյան երկրներին՝ եթե ագրեսորը նրանց վրա հարձակում գործեր։

Ելնելով վերոհիշյալ նկատառումներից, Վ. Մ. Մոլոտովը հայտարարեց, թե Սովետական Միությունը չի կարող պարտավորություններ ստանձնել որոշ երկրների նկատմամբ, առանց այն բանի, որ ճիշտ այդպիսի երաշխիքներ տրվեն Սովետական Միության հյուսիս-արևմտյան սահմանի վրա գտնվող երկրներին։

Պետք է նաև հիշեցնել, որ երբ 1939 թվի մարտի 18-ին Մոսկվայի բրիտանական դեսպան Սիդոնը Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսարին հարցրեց, թե ի՞նչ կլինի Սովետական Միության դիրքը Ռումինիայի դեմ հիտլերյան ագրեսիայի դեպքում, որի նախապատրաստման մասին անգլիացիները տեղեկություններ ունեին և երբ սովետական կողմից հարց տրվեց, թե

այդպիսի պարագաներում ինչպես կլինի Անգլիայի դիրքը։ Միդոը խուսափեց պատասխան տալուց, ասելով, թե Ռումինիան աշխարհագրականորեն ավելի մոտ է Սովետական Միությանը, քան Անգլիային։

Այսպիսով, արդեն առաջին քայլից պարզ երևան եկավ անգլիական կառավարող շրջանների ձգտումը՝ Սովետական Միությանը կաշկանդել որոշ պարտավորություններով, իսկ իրենք մի կողմ կանգնեն։ Իսկ այդ ոչ խորամանկ ձևը այնուհետև սիստեմատիկորեն նորից ու նորից կրկնվում էր բանակցությունների ամբողջ ընթացքում։

Ի պատասխան անգլիական հարցին, Սովետական Կառավարությունն առաջարկեց հրավիրել ամենից ավելի շահագրգռված պետությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, այսինքն՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռումինիայի, Լեհաստանի, Թյուրքիայի և Սովետական Միության։ Սովետական Կառավարության կարծիքով այդպիսի խորհրդակցությունը ամենից ավելի շատ հնարավորություններ կտար իրական դրությունը պարզելու և նրա բոլոր մասնակիցների դիրքը որոշելու համար։ Սակայն բրիտանական Կառավարությունը պատասխանեց, թե սովետական առաջարկությունը գտնում է վաղաժամ։

Կոնֆերանս հրավիրելու փոխարեն, որ հնարավորություն կտար համաձայնության գալու ագրեսիայի դեմ պայքարի կոնկրետ միջոցների մասին, անգլիական կառավարությունը 1939 թվի մարտի 21-ին առաջարկեց Սովետական Կառավարությանը՝ նրա, ինչպես նաև Ֆրանսիայի ու Լեհաստանի հետ համատեղ ստորագրել մի դեկլարացիա, որի մեջ ստորագրող կառավարությունները պարտավորվեին «խորհրդակցել այն քայլերի մասին որոնք պետք է ձեռնարկվեին ընդհանուր ընդդիմադրության համար», եվրոպական ամեն մի պետության անկախության համար «սպառնալիք ծագելու դեպքում»։ Բրիտանական դեսպանը ապացուցելով իր առաջարկության ընդունելի լինելը, առանձնապես պնդում էր այն հանգամանքը, թե դեկլարացիան կազմված է շատ քիչ պարտավորեցնող արտահայտություններով։

Միանգամայն ակներև էր, որ այդպիսի դեկլարացիան չի կարող պայքարի լուրջ միջոց լինել ագրեսորի կողմից ծառացած սպառնալիքի դեմ։ Ընդունելով, սակայն, որ այդպիսի սակավա-

խոստում դեկլարացիան կարող է թեկուզ և որոշ առաջընթաց քայլ հանդիսանալ ագրեսորին սանձահարելու գործում, Սովետական Կառավարությունը համաձայնվեց ընդունել անգլիական առաջարկությունը, բայց արդեն 1939 թվի ապրիլի 1-ին Մոսկվայի անգլիական դեսպանը հաղորդեց, թե Անգլիան համատեղ դեկլարացիայի հարցը համարում է վերացած։

Դեռևս երկու շաբաթ տևող ձգձգումներից հետո անգլիական արտաքին գործերի մինիստր Հալիֆաքսը Մոսկվայի դեսպանի միջոցով նոր առաջարկություն արավ Սովետական Կառավարությանը, որ Սովետական Կառավարությունը հայտարարություն աներ, թե «Սովետական Միության եվրոպական որևէ հարևանի դեմ ագրեսիայի ակտ կատարվելու դեպքում, որն ընդդիմադրություն ցույց տար, կարելի է սպասել Սովետական Կառավարության օգնությունը, եթե այդ օգնությունը ցանկալի լինի»։

Այս առաջարկության գլխավոր իմաստը հետևյալն էր, թե Գերմանիայի կողմից Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Ֆինլանդիայի դեմ ագրեսիայի ակտի դեպքում Սովետական Միությունը պարտավոր էր նրանց օգնություն ցույց տալ առանց Անգլիայի կողմից օգնություն ցույց տալու որևէ պարտավորության, այսինքն Գերմանիայի դեմ պատերազմի մեջ մտնել մենակ։ Ինչ վերաբերում է Լեհաստանին ու Ռումինիային, որոնց Անգլիան երաշխիք էր տվել, ապա այդ դեպքում էլ Սովետական Միությունը պետք է նրանց օգնություն ցույց տար ագրեսորի դեմ։ Սակայն այս դեպքում էլ Անգլիան չէր ուզում որևէ պարտավորություն ստանձնել Սովետական Միության հետ համատեղ, իրեն ձեռքի ու ապարեզի ազատություն թողնելով ամեն տեսակ մանևրի համար, չխոսելով արդեն այն մասին, որ այդ առաջարկության համաձայն Լեհաստանը և Ռումինիան, ինչպես նաև Մերձբալթյան պետությունները չէին ստանձնում ՍՍՌՄ-ի նկատմամբ։

Սովետական Կառավարությունը, սակայն, չէր ուզում բաց թողնել և ոչ մի հնարավորություն մյուս տերությունների հետ Հիտլերյան ագրեսիայի դեմ համատեղ պայքարի համաձայնության հանգելու ուղղությամբ։ Նա առանց ամենափոքր հապաղման հանդիպական առաջարկություն ներկայացրեց բրիտանական կառավարությանը։ Այդ առաջարկությունը հետևյալն էր. նախ՝ Սո-

վետական Միությունը, Անգլիան ու Ֆրանսիան փոխադարձաբար պարտավորվում են իրար ցույց տալ ամեն տեսակ անհապաղ օգնություն, ներառյալ ռազմական օգնություն՝ այդ պետություններից մեկի դեմ ագրեսիա կատարվելու դեպքում. երկրորդ՝ Սովետական Միությունը, Անգլիան ու Ֆրանսիան պարտավորվում են ամեն տեսակ, այդ թվում նաև ռազմական, օգնություն ցույց տալ Բալթիկ և Սև ծովերի միջև ընկած և Սովետական Միության հետ սահմանակից Արևելյան Եվրոպայի պետություններին՝ այդ պետությունների դեմ ագրեսիա կատարվեու դեպքում։ Վերջապես, երրորդ՝ Սովետական Միությունը, Անգլիան ու Ֆրանսիան պետք է պարտավորվեին ամենակարճ ժամկետում որոշելու վերև հիշված երկու դեպքերում այդ պետություններից յուրաքանչյուրին ցույց տրվելիք ռազմական օգնության չափերն ու ձևերը։

Սրանք էին սովետական առաջարկության առավել կարևոր կետերը։ Դժվար չէր տեսնել սովետական առաջարկության արմատական տարբերությունը բրիտանական առաջարկությունից, քանի որ սովետական առաջարկությունն իր մեջ պարունակում էր ագրեսիային համատեղ ընդդիմադրելու իսկական էֆեկտիվ միջոցառումներ։

Երեք շաբաթվա ընթացքում անգլիական կառավարության կողմից ոչ մի պատասխան չկար այդ առաջարկությանը։ Դա աճող անհանգստություն առաջ բերեց Անգլիայում, որի հետևանքով անգլիական կառավարությունը հարկադրված եղավ վերջի-վերջո հերթական մանևր հնարել հասարակական կարծիքը խաբելու համար։

Մայիսի 8-ին Մոսկվայում ստացվեց անգլիական պատասխանը կամ, ավելի ճիշտ, անգլիական հակաառաջարկը։ Սովետական կառավարությանը նորից առաջարկվում էր միակողմանի հայտարարություն անել, որով նա «պարտավորվեր Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի՝ պատերազմական գործողությունների մեջ ներգրավելու դեպքում, ի կատարումն նրանց ստանձնած պարտավորությունների (Բելգիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Հունաստանի և Թյուրքիայի հանդեպ) «անհապաղ օժանդակություն ցույց տալ, եթե դա ցանկալի լիներ. ըստ որում, ցույց տրվելիք այդ օժանդակության տեսակն ու պայմանները, պետք է համաձայնության առարկա հանդիսանային»։

Եվ այդ առաջարկության մեջ էլ խոսքը վերաբերում էր Սովետական Միության միակողմանի պարտավորություններին։ Նա պետք է պարտավորվեր օգնություն ցույց տալ Անգլիային ու Ֆրանսիային, որոնք իրենց կողմից Սովետական Միության հանդեպ բացարձակապես ո՛չ մի պարտավորություն չէին ստանձնում Մերձբալթյան ռեսպուբլիկաների վերաբերմամբ։ Այդպիսով, Անգլիան առաջարկում էր ՍՍՌՄ-ն դնել անհավասար դրության մեջ, որն անընդունելի և անվայել է ամեն մի անկախ պետության համար։

Դժվար չէ հասկանալ, որ անգլիական առաջարկությունը գործնականում հացեագրված էր ո՛չ այնքան Մոսկվային, որքան Բեռլինին։ Գերմանացիներին հրավիրում էին հարձակում գործել Սովետական Միության վրա և նրանց հասկացնել էին տալիս, թե Անգլիան ու Ֆրանսիան չեզոքություն կպահպանեն, եթե միայն գերմանական հարձակումը կատարվի Մերձ Բալթիկայի վրայով։

Մայիսի 11-ին Սովետական Միության, Անգլիայի ու Ֆրանսիայի բանակցությունները էլ ավելի բարդացան Մոսկվայի լեհական դեսպան Գրժիբովսկու հայտարարությամբ, թե «Լեհաստանը հնարավոր չի համարում փոխադարձ օգնության պակտ կնքել ՍՍՌՄ-ի հետ...»։

Հասկանալի է, լեհական ներկայացուցչի այդպիսի հայտարարություն կարող էր արվել միայն Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարող շրջանների գիտությամբ ու համաձայնությամբ։

Մոսկվայի բանակցություններում անգլիական ու ֆրանսիական ներկայացուցիչների վարքագիծն այնքան պրովոկացիոն էր կրում, որ նույնիսկ արևմտյան տերությունների կառավարող բանակում գտնվեցին մարդիկ, որոնք խիստ քննադատում էին այդպիսի կոպիտ խաղը։ Այսպես, 1939 թվի ամռանը Լլոյդ Ջորջը ֆրանսիական «Սե Սուար» թերթում հանդես եկավ մի խիստ հոդվածով, որն ուղղված էր անգլիական քաղաքականության դեմ։ Անդրադառնալով այն անվերջ քաշքշուկների կավարների դեմ։ Անդրադառնալով այն անվերջ քաշքշուկների պատճառին, որի մեջ խրվել էին Անգլիայի ու Ֆրանսիայի բանակցությունները Սովետական Միության հետ, Լլոյդ Ջորջը գրում էր, թե այդ հարցին հնարավոր է միայն մեկ պատասխան.

«Նեվիլ Չեմբերլենը, Հալիֆաքսը և Ջոն Սայմոնը ոչ մի համաձայնություն չեն ցանկանում Ռուսաստանի հետ»։

Հասկանալի է, այն, ինչ որ պարզ էր Լլոյդ Ջորջին, ոչ պակաս պարզ էր Հիտլերյան Գերմանիայի պարագլուխներին, որոնք շատ լավ հասկանում էին, թե արևմտյան տերությունները միտք անգամ չունեն լուրջ համաձայնության հանգելու Սովետական Միության հետ, այլ հետապնդում են միանգամայն այլ նպատակ։ Այդ նպատակը հետևյալն էր՝ Հիտլերին մղել որքան կարելի է շուտ հարձակում գործել Սովետական Միության վրա, նրան այդ հարձակման համար կարծես թե պարգևատրում ապահովելով Գերմանիայի հետ պատերազմի դեպքում Սովետական Միության համար ստեղծել ամենանվազ բարենպաստ պայմաններ։

Ըստ որում, արևմտյան տերությունները անվերջ ձգձգում էին իրենց բանակցությունները Սովետական Միության հետ, աշխատելով էական հարցերը թողնել մանր ուղղումների և անթիվ-անհամար վարիանտների տիղմի մեջ։ Ամեն անգամ, երբ խոսք էր բացվում ինչ-որ ռեալ պարտավորությունների մասին, այդ տերությունների ներկայացուցիչները ձևացնում էին, թե իբր չեն հասկանում, թե բանն ինչումն է։

Մայիսի վերջին Անգլիան ու Ֆրանսիան մատրին իրենց նոր առաջարկությունները, որոնք որոշ չափով բարելավում էին նախորդ վարիանտը, բայց առաջվա նման առկախ էին թողնում Սովետական Միության համար էապես կարևոր հարցը՝ Սովետական Միության հյուսիս-արևմտյան սահմանի վրա գտնվող մերձբալթյան երեք ռեսպուբլիկաներին երաշխավորելու հարցը։

Այսպիսով, իրենց երկրների հասարակական կարծիքի ճնշման տակ դիմելով մի քանի բանավոր զիջումների, Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարողները շարունակում էին տանել իրենց նախկին գիծը, իրենց առաջարկությունները պայմանավորելով այնպիսի վերապահումներով, որոնք դրանք ակներևաբար անընդունելի էին դարձնում Սովետական Միության համար։

Մոսկվայի բանակցությունների ժամանակ անգլո-ֆրանսիական ներկայացուցիչների վարքագիծն այնքան անհանդուրժելի էր, որ Վ. Մ. Մոլոտովը հարկադրված էր 1939 թվի մայիսի 27-ին անգլիական դեսպան Սիդին և ֆրանսիական գործերի հավատարմատար Պայարին հայտարարել, թե Եվրոպայում ագրեսորին համատեղ ընդդիմադրություն ցույց տալու վերաբերյալ համաձայնության նրանց ներկայացրած նախագիծը չի պարունակում

ՍՍՌՄ-ի, Անգլիայի ու Ֆրանսիայի էֆեկտիվ փոխադարձ օգնություն կազմակերպելու պլան և նույնիսկ չի վկայում, որ անգլիական ու ֆրանսիական կառավարությունները լրջորեն շահագրգռված լինեն Սովետական Միության հետ համապատասխան պակտ կնքելու մեջ։ Ըստ որում, ուղղակի հայտարարվեց, թե անգլո-ֆրանսիական առաջարկությունը այն միտքն է ծագեցնում, թե Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարությունները ո՛չ այնքան շահագրգռված են բուն պակտով, որքան նրա մասին խոսակցություններով։ Հավանական է, որ այդ խոսակցություններն էլ Անգլիային ու Ֆրանսիային անհրաժեշտ են ինչ-որ նպատակների համար։ Սովետական Կառավարությանը անհայտ են այդ նպատակները։ Սովետական կառավարությունը շահագրգռված է ոչ թե պակտի վերաբերյալ խոսակցություններով, այլ Եվրոպայում ագրեսիայի դեմ ՍՍՌՄ-ի, Անգլիայի ու Ֆրանսիայի իսկական փոխադարձ օգնություն կազմակերպելու մեջ։ Անգլո-ֆրանսիական ներկայացուցիչներին նախազգուշացվեց, թե Սովետական կառավարությունը մտադիր չէ մասնակցելու պակտի վերաբերյալ խոսակցություններին, որոնց նպատակը ՍՍՌՄ-ն չգիտե և թե անգլիական ու ֆրանսիական կառավարությունները կարող են այդպիսի խոսակցություններ վարել ավելի հարմար ընկերակցի հետ, քան ՍՍՌՄ-ն։

Մոսկվայի բանակցություններն անվերջ ձգձգվում էին։ Բանակցությունների այդպիսի անթույլատրելի ձգձգման պատճառները բերից թոցրեց Լոնդոնի «Թայմսը», որը գրում էր. «Արագները բերնից թռցրեց Լոնդոնի «Թայմսը», որը գրում էր. «Արագ և վճռական դաշինքը Ռուսաստանի հետ կարող է խանգարել այլ բանակցությունների...»[1]։ «Թայմսը» խոսելով «այլ բանակցությունների» մասին, ակներևաբար նկատի ուներ անդրծովյան բաուևարի գործերի անգլիական մինիստր Ռոբերտ Հանդսոնի բանակցությունները Հիտլերի տնտեսական խորհրդական դոկտոր Հելմուտ Վոլտատի հետ, հիտլերյան Գերմանիային շատ խոշոր գումարով անգլիական փոխառություն տրամադրելու հարցի վերաբերյալ, որի մասին կխոսվի հետագայում։

Բացի դրանից, ինչպես հայտնի է, այն օրը, երբ հիտլերյան բանակը մտնում էր Պրագա, մամուլի հաղորդագրությամբ, անգ-

---

1. Սեյերս և Կան. «Գաղտնի պատերազմը ընդդեմ Սովետական Ռուսաստանի», Մոսկվա, 1947 թ., էջ 371։

լիական արդյունաբերական ֆեդերացիայի դելեգացիան Դյուսելդորֆում բանակցություններ էր վարում գերմանական խոշոր արդյունաբերության հետ՝ լայն համաձայնություն կնքելու մասին։

Ուշագրավ էր նաև այն հանգամանքը, որ Մոսկվայում Մեծ Բրիտանիայի անունից բանակցություններ վարելը հանձնարարված էր երկրորդական անձանց, մինչդեռ Հիտլերի հետ բանակցություններ վարելու համար Անգլիայից Գերմանիա էր մեկնում ինքը՝ Չեմբերլենը և այն էլ մի քանի անգամ։ Կարևոր է նշել նաև այն, որ Սովետական Միության հետ բանակցություններ վարելու համար անգլիական ներկայացուցիչ Ստրենգը լիազորություններ չուներ Սովետական Միության հետ որևէ համաձայնագիր ստորագրելու համար։

Հնարավոր ագրեսորի դեմ պայքարելու միջոցառումների մասին կոնկրետ բանակցությունների անցնելու ուղղությամբ Սովետական Միության պահանջների հանդեպ Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարությունները պետք է համաձայնվեին Մոսկվա ուղարկել իրենց զինվորական միսիաները, սակայն այդ միսիաները արտասովոր կերպով ուշ էին հասնում Մոսկվա, իսկ երբ որ նրանք ժամանեցին, ապա պարզվեց, որ դրանք կազմված էին երկրորդական անձերից, որոնք, ըստ որում, լիազորություններ չունեին որևէ համաձայնագիր ստորագրելու համար։ Այդ պայմաններում ռազմական բանակցությունները նույնքան անպտուղ եղան, ինչպես և քաղաքական բանակցությունները։

Արևմտյան տերությունների զինվորական միսիաները անմիջապես ցույց տվին, թե նրանք չեն էլ ցանկանում լուրջ խոսել փոխադարձ օգնության միջոցների մասին՝ Գերմանիայի ագրեսիայի դեպքում։ Սովետական զինվորական միսիան ելնում էր այն բանից, թե ՍՍՌՄ-ն ընդհանուր սահման չունենալով Գերմանիայի հետ, Անգլիային, Ֆրանսիային, Լեհաստանին պատերազմի դեպքում օգնություն կարող է ցույց տալ միայն սովետական զորքերին Լեհաստանի տերիտորիայի վրայով ճանապարհ տալու դեպքում։ Սակայն լեհական կառավարությունը հայտարարեց, որ նա ռազմական օգնություն չի ընդունի Սովետական Միության կողմից, դրանով ցույց տալով, որ նա Սովետական Միության ուժեղացումից ավելի է վախենում, քան հիտլերյան ագրեսիայից։ Լեհաս-

տանի դիրքը պաշտպանեցին ինչպես անգլիական, այնպես էլ ֆրանսիական միսիաները։

Ռազմական բանակցությունների ընթացքում դրվեց նաև զինված ուժերի քանակի հարցը, որոնք պետք է համաձայնության մասնակիցները անհապաղ դուրս բերեին ագրեսիայի դեպքում։ Այն ժամանակ անգլիացիները ծիծաղելի թիվ ասացին, հայտարարելով, թե իրենք կարող են դուրս բերել հինգ հետևակային և մեկ մեքենայացված դիվիզիա։ Եվ այդ բանը անգլիացիներն առաջարկեցին այն ժամանակ, երբ Սովետական Միությունը հայտարարեց, որ ինքը պատրաստ է ագրեսորի դեմ ռազմաճակատ դուրս բերել 136 դիվիզիա, 5 հազար միջակ ու ծանր հրանոթ, մոտ 10 հազար տանկ ու տանկետակա. ավելի քան 5 հազար մարտական ինքնաթիռ և այլն։ Սրանից երևում է, թե անգլիական կառավարությունը որքան ոչ-լուրջ էր վերաբերվում ՍՍՌՄ-ի հետ ռազմական համաձայնագիր կնքելու բանակցություններին։

Վերոհիշյալ տվյալները բավական են հաստատելու համար այն հետևությունը, որ ինքնին բխում էր, իսկ այդ հետևությունը հետևյալն էր.

1. Սովետական Կառավարությունը բանակցությունների ամբողջ ընթացքում բացառիկ համբերատարությամբ ձգտում էր ապահովել համաձայնություն Անգլիայի ու Ֆրանսիայի հետ փոխադարձ օգնության մասին, ընդդեմ ագրեսորի, իրավահավասար սկզբունքներով և պայմանով, որ փոխադարձ օգնությունը լինի իսկապես էֆեկտիվ, այսինքն այն, որ քաղաքական պայմանագրի կնքմանը հետևի օգնության չափերը, ձևերը և ժամկետները սահմանող ռազմական կոնվենցիայի ստորագրումը, որովհետև իրադարձությունների նախորդ ամբողջ ընթացքը բավականաչափ պարզորոշ ցույց է տվել, որ միայն այդպիսի համաձայնագիրը կարող է լինել էֆեկտիվ և ընդունակ խելքի բերելու հիտլերյան ագրեսորին, որը երես էր առել միանգամայն անպատիժ մնալու և շատեր

քանակությունը հետապնդում էր այլ նպատակներ, որոնք ընդհանուր ոչինչ չունեին խաղաղության շահերի և ագրեսիայի դեմ պայքարելու հետ։

3. Անգլո-ֆրանսիական քաղաքականության նենգ դիտավորություններն էին՝ Հիտլերին հասկացնել տալ, թե ՍՍՌՄ-ն դաշնակիցներ չունի, թե ՍՍՌՄ-ն մեկուսացված է, թե Հիտլերը կարող է հարձակվել ՍՍՌՄ-ի վրա առանց երկյուղ կրելու, թե Անգլիան ու Ֆրանսիան դիմադրություն ցույց կտան։

Նկատի ունենալով այդ, չպետք է զարմանալ, որ անգլո-ֆրանս-սովետական բանակցությունները ձախողվեցին։

Այդ ձախողումը, իհարկե, պատահական չէր։ Գնալով ավելի ակներև էր դառնում, որ բանակցությունների ձախողումը նախօրոք պլանավորված էր արևմտյան տերությունների ներկայացուցիչների կողմից՝ իրենց երկակի խաղում։ Բանն այն էր, որ ՍՍՌՄ-ի հետ բաց բանակցություններ վարելով, անգլիացիները անդրկուլիսային բանակցություններ էին վարում Գերմանիայի հետ և այդ բանակցություններին նրանք, անտարակույս, ավելի մեծ նշանակություն էին տալիս։

Եթե արևմտյան տերությունների կառավարող շրջանները Մոսկվայի իրենց բանակցություններով ձգտում էին ամենից առաջ քնացնել իրենց երկրների հասարակական կարծիքը, խաբել պատերազմի մեջ ներքաշվող ժողովուրդներին, ապա հիտլերականների հետ վարած բանակցությունները ուրիշ բնույթ ունեին։

Անգլո-գերմանական բանակցությունների ծրագիրը բավականաչափ պարզ ձևակերպված է Անգլիայի արտաքին գործերի մինիստր Հալիֆաքսի կողմից, որը հիտլերյան Գերմանիային դիմում էր աներկմիտ կոչ անելով այն նույն ժամանակ, երբ նրա պաշտոնյաները շարունակում էին բանակցություններ վարել Մոսկվայում։ 1939 թվի հունիսի 29-ին միջազգային հարաբերությունների արքայական ինստիտուտի ճաշկերույթում արտասանած ճառում Հալիֆաքսը պատրաստակամություն հայտնեց Գերմանիայի հետ համաձայնության գալու բոլոր հարցերի շուրջը, «որոնք տագնապ են ներշնչում աշխարհին»։ Նա ասում էր.

«Այդպիսի նոր մթնոլորտում մենք կարող էինք քննարկել դաղութային պրոբլեմը, հումքի, առևտրական խոչընդոտների, «կենսական տարածության», սպառազինությունների սահմանա-

փակման հարցերը և Եվրոպացիներին շոշափող բոլոր մյուս հարցերը»[1]։

Եթե վերհիշենք, որ Հալիֆաքսին մոտիկ կանգնած պահպանողական «Դեյլի Մեյլ» թերթը դեռևս 1933 թվին ինչպես էր մեկնաբանում «կենսական տարածության» պրոբլեմը։ Հիտլերին առաջարկելով «կենսական տարածությունը» պոկել ՍՍՌՄ-ից, ապա ամենափոքր տարակույս անգամ չի մնում Հալիֆաքսի հայտարարության իսկական իմաստի մեջ։ Դա աշխարհը և ազդեցության շրջանները բաժանելու մասին համաձայնության գալու բացահայտ առաջարկություն էր ուղղված Հիտլերյան Գերմանիային, բոլոր հարցերը առանց Սովետական Միության և գլխավորապես ի հաշիվ Սովետական Միության լուծելու առաջարկություն։

Դեռևս 1939 թվի հունիսին Անգլիայի ներկայացուցիչները սկսեցին խիստ գաղտնի կերպով բանակցություններ վարել Գերմանիայի հետ Լոնդոն ժամանած Վոլտատի միջոցով, որը Հիտլերի լիազորն էր քառամյա պլանի գծով։ Նրա հետ զրուցել են Անգլիայի Անդրծովյան առևտրի գործերի մինիստր Հադսոնը և Չեմբերլենի ամենամերձավոր խորհրդական Գ. Վիլսոնը։ Հունիսյան այդ բանակցությունների բովանդակությունը դեռևս թաղված է դիվանագիտական արխիվների գաղտնարաններում։ Բայց հուլիսին Վոլտատը կրկին անգամ այցելեց Լոնդոն և բանակցությունները վերսկսվեցին։ Բանակցությունների այդ երկրորդ տուրի բովանդակությունը այժմ հայտնի է Սովետական Կառավարության տրամադրության տակ եղած գերմանական ռազմաավարային փաստաթղթերից, որոնք շուտով լույս կտեսնեն։

Հադսոնը և Գ. Վիլսոնը Վոլտատին, իսկ այնուհետև Լոնդոնի գերմանական դեսպան Դիրքսենին առաջարկեցին գաղտնի բանակցություններ սկսել լայն համաձայնություն կնքելու նպատակով, որն իր մեջ պարունակեր ազդեցության ոլորտները համաշխարհային մասշտաբով բաժանելու և «ընդհանուր շուկաներում սպանիչ մրցակցությունները» վերացնելու մասին։ Ըստ որում, նախատեսվում էր Գերմանիայի գերակշիռ ազդեցություն տրամադրել Հարավ-Արևելյան Եվրոպայում։ Դիրքսենը 1939 թվի հուլիսի 21-ին

---

1. Լորդ Հալիֆաքսի ճառերը միջազգային քաղաքականության մասին։ Օքսֆորդ, Լոնդոն, 1940 թ., էջ 296։

գերմանական արտաքին գործերի մինիստրությանը ներկայացրած իր զեկուցագրում նշում է, թե Վոլտատի և Վիլսոնի քննարկած ծրագիրը ընդգրկում էր քաղաքական, ռազմական ու տնտեսական դրույթներ։ Քաղաքական դրույթների մեջ շհարձակման պակտի կողքին հատուկ տեղ էր հատկացվում շմիջամտության պակտին, որը պետք է պարունակեր՝ «կենսական տարածությունների սահմանագծումը մեծ տերությունների միջև, և հատկապես Անգլիայի ու Գերմանիայի միջև»[1]։

Այդ երկու պակտերի կնքման հետ կապված հարցերի քննարկման ժամանակ անգլիական ներկայացուցիչները խոստանում են, թե այդ պակտերը ստորագրելու դեպքում Անգլիան կհրաժարվի Լեհաստանին հենց նոր տված իր երաշխիքներից։

Դանցիգի հարցը, ինչպես նաև լեհական միջանցքի հարցը անգլիացիները պատրաստ էին, անգլո-գերմանական համաձայնագրի կնքման դեպքում, թույլ տալ, որ գերմանացիները այն լուծեն Լեհաստանի հետ մենամենակ, պարտավորվելով շմիջամտել դրանց լուծմանը։

Այնուհետև,— այդ ևս փաստաթղթով հաստատվում է Դիրքսենի զեկուցագրերով, որոնք շուտով հրապարակվելու են,— Վիլսոնը հաստատել է, թե Անգլիայի ու Գերմանիայի միջև վերոհիշյալ պակտերի կնքման դեպքում անգլիական երաշխավորական քաղաքականությունը փաստորեն կվերանա։

«Այն ժամանակ Լեհաստանը,— նշում է այդ առթիվ իր զեկուցագրում Դիրքսենը,— այսպես ասած միայնակ կըթողնվեր Գերմանիայի հետ դեմ առ դեմ»։

Այդ բոլորը նշանակում էր, որ Անգլիայի կառավարողները պատրաստ էին Լեհաստանը հանձնելու Հիտլերի հոշոտմանը, այն ժամանակ, երբ դեռ չէր չորացել թանաքը, որով ստորագրվել էին Լեհաստանին տրված անգլիական երաշխիքները։

Դրա հետ միասին, անգլո-գերմանական համաձայնագրի կնքման դեպքում ձեռք բերված կլիներ այն նպատակը, որ Անգլիան ու Ֆրանսիան դնում էին իրենց առաջ, բանակցություններ սկսելով Սովետական Միության հետ, և է՛լ ավելի կհեշտանար

---

1. Անգլիայի գերմանական դեսպան Դիրքսենի 1939 թվի հուլիսի 21-ի գրությունը։ Գերմանական արտաքին գործերի մինիստրության արխիվ։

Գերմանիայի ու ՍՍՌՄ-ի միջև ընդհարումն արագացնելու հնարավորությունը։

Վերջապես, Անգլիայի ու Գերմանիայի միջև քաղաքական համաձայնագիրը ենթադրվում էր լրացնել տնտեսական համաձայնագրով, որն իր մեջ պարունակեր գաղութային հարցերի, հումքի բաշխման, շուկաների բաժանման գաղտնի գործարքներ, ինչպես նաև անգլիական խոշոր փոխառություն Գերմանիային։

Այսպես ուրեմն, Անգլիայի կառավարողների առաջ պարզվում էր Գերմանիայի հետ հաստատուն համաձայնության գրավիչ պատկերը և այսպես կոչված գերմանական ագրեսիայի «կանալիզացիան» դեպի Արևելք՝ դեռ նոր իրենց կողմից «երաշխավորված» Լեհաստանի և Սովետական Միության դեմ։

Զարմանալի՞ է արդյոք, որ զրպարտիչները և պատմության կեղծարարները խնամքով լռություն են պահպանում և փորձում են թաքցնել այս փաստերը, որոնք վճռական նշանակություն ունեն այն իրադրությունը հասկանալու համար, որի մեջ պատերազմը, այդպիսով, դարձավ անխուսափելի։

Այդ ժամանակներում արդեն ոչ մի տարակույս չէր կարողանալ, որ Անգլիան ու Ֆրանսիան ոչ միայն տրամադիր չէին լրջորեն որևէ բան ձեռնարկել խանգարելու Հիտլերյան Գերմանիային բորբոքելու պատերազմը, այլ, ընդհակառակը, անում էին իրենցից կախված ամեն ինչ, որպեսզի գաղտնի համաձայնության գալու և գործարքների մեթոդներով, ամեն տեսակ պրովակացիաների մեթոդներով Հիտլերյան Գերմանիային լարեին Սովետական Միության դեմ։

Ոչ մի դրամաենգի չի՛ հաջողվի ո՛չ պատմությունից և ո՛չ էլ ժողովուրդների գիտակցությունից դուրս նետելու այն վճռողական փաստը, որ այդ պայմաններում Սովետական Միության առաջ կանգնած ընտրությունը հետևյալն էր.

Կամ ինքնապաշտպանության նպատակներով ընդունել Գերմանիայի արած առաջարկությունը շհարձակման պայմանագիր կնքելու մասին, և դրանով իսկ Սովետական Միության համար ապահովել խաղաղության երկարաձգումը որոշ ժամանակով, որը Սովետական պետության կողմից կարող էր օգտագործվել ագրեսորի հավանական հարձակմանը հակահարված տալու համար իր ուժերը լավագույն ձևով նախապատրաստելու նպատակներով.

Կամ թե մերժել Գերմանիայի առաջարկությունը չհարձակման պակտ կնքելու մասին, և դրանով իսկ արևմտյան պետությունների լագերին պատկանող պատերազմի պրովոկատորներին թույլ տալ Սովետական Միությանը անհապաղ զինված կոնֆլիկտի մեջ մղտցընելու Գերմանիայի հետ՝ Սովետական Միության համար միանգամայն՝ աննպաստ իրադրության մեջ, նրա լիակատար ու մենեռատացման պայմաններում։

Սովետական Կառավարությունը այդպիսի իրադրության մեջ հարկադրված եղավ կատարել իր ընտրությունը և Գերմանիայի հետ կնքել չհարձակման պակտ։

Այդ ընտրությունը հանդիսացավ սովետական արտաքին քաղաքականության հեռատես և իմաստուն քայլը՝ այն ժամանակ ստեղծված իրադրության մեջ։ Սովետական Կառավարության այս քայլը հակայական շափով կանխորոշեց Սովետական Միության և բոլոր ազատասեր ժողովուրդների համար երկրորդ համաշխարհային պատերազմի բարենպաստ վախճանը։

Կապիտ զրպարտություն կլիներ պնդել, թե հիտլերականների հետ պակտի կնքումը մտնում էր ՍՍՌՄ արտաքին քաղաքականության պլանի մեջ։ Ընդհակառակը, ՍՍՌՄ-ն շարունակ ձգտում էր համաձայնագիր ունենալ արևմտյան ոչ-ագրեսիվ պետությունների հետ ընդդեմ գերմանա-իտալական ագրեսորների՝ հավասարության սկզբունքներով, կոլեկտիվ անվտանգություն իրագործելու նպատակով։ Սակայն համաձայնագիրը երկկողմանի ակտ է։ Եթե ՍՍՌՄ-ն ձգտում էր համաձայնագրի՝ ագրեսիայի դեմ պայքարելու համար, ապա Անգլիան ու Ֆրանսիան սիստեմատիկաբար մերժում էին այն, գերադասելով վարել ՍՍՌՄ-ն մեկուսացնելու քաղաքականություն, ագրեսորներին զիջումներ անելու քաղաքականություն, ագրեսիան դեպի Արևելք, դեպի ՍՍՌՄ ուղղելու քաղաքականություն։ Ամերիկայի Միացյալ Նահանգները ո՛չ միայն չէին ընդդիմադրում այդպիսի կործանարար քաղաքականությանը, այլ, ընդհակառակը, ամեն կերպ պաշտպանում էին այդ քաղաքականությունը։ Ինչ վերաբերում է ամերիկյան միլիարդատերերին, ապա նրանք շարունակում էին իրենց կապիտալները ներդնել գերմանական ծանր արդյունաբերության մեջ, գերմանացիներին օգնում էին ծավալելու իրենց ռազմական արդյունաբերությունը և այդպիսով, զինում էին գերմանական ագրեսիան, կարծես թե ասե-

չով. «Պատերազմեցեք, պարոնայք եվրոպացիներ, բարի վայելում։ Պատերազմեցեք աստծո օգնությամբ, իսկ մենք, ամերիկյան հարյուր միլիարդատերերս կհարստանանք ձեր պատերազմից, կուտակելով հարյուր միլիոնավոր դոլար գերշահույթ»։

Հասկանալի է, որ Եվրոպայում գործերի նման դրության դեպքում Սովետական Միությանը մնում էր մեկ ելք. ընդունել գերմանացիների առաջարկությունը պակտի մասին։ Դա, համենայն դեպս, ավելի լավ ելք էր բոլոր հնարավոր ելքերից։

Ինչպես 1918 թվին արևմտյան տերությունների թշնամական քաղաքականության պատճառով Սովետական Միությունը հարկադրված եղավ գերմանացիների հետ կնքել Բրեստի հաշտությունը, այնպես էլ այժմ, 1939 թվին, Բրեստի հաշտությունից քսան տարի հետո, Սովետական Միությունը հարկադրված եղավ գերմանացիների հետ պակտ կնքել Անգլիայի ու Ֆրանսիայի միևնույն թշնամական քաղաքականության պատճառով։

Ամեն տեսակ ղրպարտիչների խոսակցությունները, թե ՍՍՌՄ-ն այնուամենայնիվ, իրեն թույլ չպետք է տար պակտի դիմելու գերմանացիների հետ, չի կարելի դիտել այլ կերպ, քան ծիծաղելի խոսակցություններ։ Ինչո՞ւ Լեհաստանը դաշնակիցներ ունենալով հանձին Անգլիայի ու Ֆրանսիայի կարող էր գերմանացիների հետ չհարձակման պակտ կնքել 1934 թվին, իսկ Սովետական Միությունը, գտնվելով նվազ բարենպաստ պայմաններում, չէր կարող այդպիսի պակտի դիմել 1939 թվին։ Ինչո՞ւ Անգլիան ու Ֆրանսիան, որոնք տիրապետող ուժ էին հանդիսանում Եվրոպայում, կարող էին համատեղ դիմել գերմանացիների հետ չհարձակման դեկլարացիա հրապարակելու 1938 թվին, իսկ Անգլիայի ու Ֆրանսիայի թշնամական քաղաքականության հետևանքով մեկուսացված Սովետական Միությունը չէր կարող պակտ կնքել գերմանացիների հետ։

Մի՞թե փաստ չէ, որ Եվրոպայի ոչ ագրեսիվ մեծ տերություններից Սովետական Միությունը վերջին տերությունն էր, որը դիմեց գերմանացիների հետ պակտ կնքելուն։

Իհարկե, պատմության կեղծարարները և մյուս ռեակցիոներները դժգոհ են, որ Սովետական Միությանը հաջողվեց սովետա-գերմանական պակտը հմտորեն օգտագործել իր պաշտպանությունն ամրապնդելու նպատակով, որ նրան հաջողվեց իր սահ-

մանները շատ հեռուն տանել դեպի Արևմուտք և փակել գերմանական ագրեսիայի դեպի Արևելք անարգել առաջխաղացման ուղին, որ հիտլերյան զորքերը հարկադրված եղան իրենց դեպի Արևելք հարձակումն սկսել ո՛չ թե Նարվա—Մինսկ—Կիև գծից, այլ հարյուրավոր կիլոմետր ավելի արևմուտք ընկած գծից, որ ՍՍՌՄ-ն արյունաքամ չեղավ Հայրենական պատերազմում, այլ հաղթող դուրս եկավ պատերազմից։ Բայց այս դժգոհությունն արդեն վերաբերում է ձախողված քաղաքագետների անզոր շարությանն բնագավառին։

Այդ պարոնների շար դժգոհությունը կարելի է դիտել, որպես այն անտարակուսելի փաստի ցուցադրում, թե Սովետական Միության քաղաքականությունը եղել է ու մնում է ճիշտ քաղաքականություն։

IV

„ԱՐԵՎԵԼՅԱՆ“ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ, ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՍՍՌՄ-Ի ՎՐԱ, ՀԱԿԱՇԻՏԼԵՐՅԱՆ ԿՈԱԼԻՑԻԱՆ ԵՎ ՄԻՋԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

1939 թվի օգոստոսին կնքելով սովետա-գերմանական չհարձակման պակտը, Սովետական Միությունը ո՛չ մի բոպե չէր տարակուսում, որ Հիտլերը, վաղ թե ուշ, կհարձակվի ՍՍՌՄ-ի վրա։ Սովետական Միության այդ համոզմունքը բխում էր հիտլերականների քաղաքական և ռազմական հիմնական դրույթից։ Դա հաստատվում էր ամբողջ նախապատերազմյան ժամանակաշրջանում հիտլերյան կառավարության պրակտիկ գործունեությամբ։

Դրա համար էլ Սովետական Կառավարության առաջին խնդիրն էր՝ «Արևելյան» ռազմաճակատ ստեղծել հիտլերյան ագրեսիայի դեմ, պաշտպանության գիծ կառուցել բելոռուսական և ուկրաինական հողերի արևմտյան սահմանների մոտ և այդպիսով պատվար կազմակերպել գերմանական զորքերի դեպի արևելք անարգել առաջխաղացման դեմ։ Այդ բանի համար պետք էր Արևմտյան Բելոռուսիան և Արևմտյան Ուկրաինան, որ պանական Լեհաստանը գավթել էր 1920 թվին, վերամիավորել Սովետական Բելոռուսիայի ու Սովետական Ուկրաինայի հետ և սովետական զորքերն առաջ շարժել այդտեղ։ Այդ գործը չէր կալելի ուշացնել, որովհետև լեհական վատ մատակարարված զորքերը անկայուն դուրս եկան, լեհական հրամանատարությունը և լեհական Կառավարությունն արդեն փախուստի մեջ էին, և հիտլերյան զորքերը լուրջ արգելակի չհանդիպելով, կարող էին բելոռուսական և ուկրաինական հողերը գրավել ավելի շուտ, քան այնտեղ կհասնեին սովետական զորքերը։

1939 թվի սեպտեմբերի 17-ին Սովետական Կառավարության հրամանով սովետական զորքերն անցան սովետա-լեհական նախապատերազմյան սահմանը, գրավեցին Արևմտյան Բելոռուսիան և Արևմտյան Ուկրաինան և այնտեղ պաշտպանական շինարարություն ծավալեցին ուկրաինական ու բելոռուսական հողերի արևմտյան դծի երկարությամբ։ Դա հիմնականում այն նույն գիծն էր, որը պատմության մեջ հայտնի է որպես «Քերզոնի» գիծ, սահմանված դաշնակիցների Վերսալի կոնֆերանսում։

Դրանից մի քանի օր անց Սովետական Կառավարությունը Մերձբալթյան պետությունների հետ կնքեց փոխադարձ օգնության պակտեր, որոնք նախատեսում էին Սովետական Բանակի կայազորների տեղավորում Էստոնիայի, Լատվիայի ու Լիտվայի տերիտորիաներում, սովետական օդանավակայանների կազմակերպում և ռազմա-ծովային բազաների ստեղծում։

Այսպիսով ստեղծվեց «արևելյան» ռազմաճակատի հիմքը։

Դժվար չէր հասկանալ, որ «արևելյան» ռազմաճակատի ստեղծումը լուրջ ավանդ է հանդիսանում ոչ միայն ՍՍՌՄ-ի անվտանգության կազմակերպման գործում, այլև խաղաղասեր պետությունների ընդհանուր գործում, որոնք պայքար էին մղում հիտլերյան ագրեսիայի դեմ։ Այնուամենայնիվ, անգլո-ֆրանս-ամերիկյան շրջանները իրենց ճնշող մեծամասնությամբ Սովետական Կառավարության այդ քայլին պատասխանեցին հակասովետական շարամիտ կամպանիայով, այն որակելով որպես ագրեսիա։

Ի դեպ, գտնվեցին նաև այնպիսի քաղաքական գործիչներ, որոնք բավականաչափ խորաթափանցություն ունեցան հասկանալու սովետական քաղաքականության իմաստը և ճիշտ համարելու «արևելյան» ռազմաճակատի ստեղծումը։ Դրանց թվում առաջին տեղը պատկանում է պ-րն Չերչիլին, այն ժամանակ դեռևս ռազմածովային մինիստրին, որն իր 1939 թվի հոկտեմբերի 1-ի ռադիո ելույթում, Սովետական Միության դեմ մի շարք անբարյացակամ հարձակումներից հետո, հայտարարեց.

«Այն, որ ռուսական բանակները պետք է գտնվեին այդ գծի վրա, միանգամայն անհրաժեշտ էր Ռուսաստանի անվտանգության համար ընդդեմ գերմանական սպառնալիքի։ Համենայն դեպս, դիրքերը գրավված են և ստեղծված է Արևելյան ռազմաճակատ, որի վրա նացիստական Գերմա-

նիան չի համարձակվի հարձակվել։ Երբ պ-րն Ֆոն Ռիբբենտրոպը անցյալ շաբաթ կանչվեց Մոսկվա, ապա այդ բանն արվեց նրա համար, որպեսզի նա ծանոթանար այդ փաստի հետ և ընդուներ, թե Բալթիական պետությունների և Ուկրաինայի նկատմամբ նացիստների դիտավորություններին պետք է վերջ տրվի»։

Եթե ՍՍՌՄ-ի արևմտյան սահմանների վրա, Մոսկվայից, Մինսկից և Կիևից նշանակալից հեռավորության վրա, ՍՍՌՄ-ի անվտանգության գործը քիչ թե շատ բավարար դրության մեջ էր գտնվում, ապա նույն բանը չէր կարելի ասել ՍՍՌՄ-ի հյուսիսային սահմանի մասին։ Այստեղ, Լենինգրադից ինչ-որ 32 կիլոմետր հեռավորության վրա, կանգնած էին ֆիննական զորքերը, որոնց հրամանատարական կազմի մեծ մասը կողմնորոշվում էր դեպի հիտլերյան Գերմանիան։ Սովետական Կառավարությանը լավ հայտնի էր, որ Ֆինլանդիայի ղեկավար շրջանների ֆաշիստական տարրերը, որոնք սերտորեն կապված էին հիտլերականների հետ և մեծ ազդեցություն ունեին ֆիննական բանակում, ձգտում էին գավթել Լենինգրադը։ Չէր կարելի պատահական համարել այն փաստը, որ հիտլերյան բանակի գլխավոր շտաբի պետ Գալդերը դեռևս 1939 թվի ամռանը ժամանել էր Ֆինլանդիա՝ ֆիննական բանակի բարձր ղեկավարներին հրահանգներ տալու համար։ Դրժվար էր կասկածել, որ ֆիննական ղեկավար շրջանները դաշինքի մեջ էին գտնվում հիտլերականների հետ, որ նրանք ցանկանում էին Ֆինլանդիան պլացդարմ դարձնել ՍՍՌՄ-ի վրա հիտլերյան Գերմանիայի հարձակման համար։

Դրա համար էլ զարմանալի չէ, որ երկու երկրների միջև հարաբերությունները բարելավելու գործում Ֆիննական Կառավարության հետ ընդհանուր լեզու գտնելու ուղղությամբ ՍՍՌՄ-ի ձեռնարկած բոլոր փորձերն ապարդյուն անցան։

Ֆինլանդիայի կառավարությունը մեկը մյուսի ետևից մերժեց Սովետական Կառավարության բարեկամական առաջարկությունները, որոնց նպատակն էր ապահովել ՍՍՌՄ-ի և, մասնավորապես, Լենինգրադի անվտանգությունը, չնայած այն բանին, որ Սովետական Միությունը ընդառաջեց Ֆինլանդիային՝ նրա օրինական պահանջները բավարարելու գործում։

Ֆինլանդական կառավարությունը մերժեց ՍՍՌՄ-ի առաջար-

կությունը՝ Կարելական պարանոցում մի քանի տասնյակ կիլոմետրով ետ քաշել ֆիննական սահմանը, թեև Սովետական Կառավարությունը համաձայնվում էր դրա փոխարեն Ֆինլանդիային զիջել Սովետական Կարելիայի կրկնակի չափով մեծ տերիտորիա։

Ֆինլանդական կառավարությունը մերժեց նաև փոխադարձ օգնության պակտ կնքելու մասին սովետական առաջարկությունը, դրանով ցույց տալով, որ ՍՍՌՄ-ի անվտանգությունը Ֆինլանդիայի կողմից մնում է անապահով։

Այ և նման այլ թշնամական գործողություններով ու սովետա-ֆիննական սահմանագլխին առաջ բերած պրովոկացիաներով, Ֆինլանդիան պատերազմ բորբոքեց Սովետական Միության դեմ։

Սովետա-ֆիննական պատերազմի արդյունքները հայտնի են։ ՍՍՌՄ-ի սահմանները հյուսիս-արևմուտքում և մասնավորապես Լենինգրադի շրջանում առաջ տարվեցին և ՍՍՌՄ-ի անվտանգությունն ամրապնդվեց։ Դա կարևոր դեր խաղաց Սովետական Միության պաշտպանության գործում ընդդեմ հիտլերյան ագրեսիայի, քանի որ հիտլերյան Գերմանիան ու նրա ֆիննական գործակիցները հարկադրված եղան իրենց հարձակումը ՍՍՌՄ-ի հյուսիս արևմուտքում սկսել ո՛չ թե Լենինգրադի մոտից, այլ նրանից համարյա 150 կիլոմետր հյուսիս-արևմուտք ընկած գծից։

ՍՍՌՄ Գերագույն Սովետի սեսիայում 1940 թվի մարտի 29-ին արտասանած իր ճառում Վ. Մ. Մոլոտովը հայտարարեց.

«...Սովետական Միությունը, որ ջախջախեց ֆիննական բանակին և լիակատար հնարավորություն ուներ գրավելու ամբողջ Ֆինլանդիան, չդիմեց այդ բանին և ո՛չ մի ռազմատուգանք չպահանջեց ի հատուցումն իր ռազմական ծախքերի, ինչպես այդ բանը կաներ ամեն մի ուրիշ տերություն, այլ իր ցանկությունները սահմանափակեց նվազագույնով...»

«Ոչ մի ուրիշ նպատակ, բացի Լենինգրադի, Մուրմանսկի և Մուրմանսկի երկաթուղու անվտանգության ապահովումից, մենք չենք նշել Հաշտության պայմանագրում»։

Պետք է նշել, որ չնայած ֆիննական կառավարող շրջանները ՍՍՌՄ-ի վերաբերմամբ իրենց ամբողջ քաղաքականության մեջ օգնում էին հիտլերյան Գերմանիային, Ազգերի Լիգայի անդրոֆրանսիական պարագլուխներն անմիջապես կանգնեցին Ֆինլանդա-

կան կառավարության կողմում, Ազգերի Լիգայի միջոցով ՍՍՌՄ-ն հայտարարեցին «ագրեսոր» և դրանով իսկ բացահայտորեն խրախուսեցին ու պաշտպանեցին ֆիննական կառավարողների սկսած պատերազմը Սովետական Միության դեմ։ Ազգերի Լիգան, որն իրեն արատավորել էր ճապոնական և գերմանա-իտալական ագրեսորներին ցույց տված թողտվությամբ և խրախուսանքով, անգլո-ֆրանսիական պարագլուխների հրամանով հլու հնազանդ ձայն տվեց Սովետական Միության դեմ ուղղված բանաձևին, դեմոնստրատիվ կերպով ՍՍՌՄ-ն «վտարելով» Ազգերի Լիգայից։

Դեռ ավելին։ Սովետական Միության դեմ ֆիննական ռեակցիոներների հրահրած պատերազմում Անգլիան ու Ֆրանսիան ամեն կերպ օգնում էին ֆիննական ռազմամոլներին։ Անգլո-ֆրանսիական կառավարող շրջանները չէին դադարում ֆիննական կառավարությանը դրդելու՝ շարունակել պատերազմական գործողությունները։

Անգլո-ֆրանսիական կառավարողները սիստեմատիկաբար զենք էին մատակարարում Ֆինլանդիային և Եռանդուն կերպով պատրաստվում էին հարյուր հազարանոց էքսպեդիցիոն բանակ ուղարկել Ֆինլանդիա։

Պատերազմի սկզբից անցած երեք ամիսների ընթացքում Անգլիան, 1940 թվի մարտի 19-ին համայնքների պալատում Չեմբերլենի արած հայտարարության համաձայն, Ֆինլանդիային հանձնել էր 101 ինքնաթիռ, ավելի քան 200 հրանոթ, հարյուր հազարավոր արկեր, ավիացիոն ռումբ և հակատանկային ական։ Միաժամանակ Դալադյեն դեպուտատների պալատին հաղորդեց, որ Ֆրանսիան Ֆինլանդիային տվել է 175 ինքնաթիռ, մոտ 500 հրանոթ, ավելի քան 5 հազար գնդացիր, մեկ միլիոն արկ ու ձեռքի նռնակ և զանազան այլ սպառազինություն։

Բրիտանական և Ֆրանսիական կառավարությունների այդ ժամանակվա պլանների մասին ամբողջովին կարելի է դատել այն հուշագրի հիման վրա, որ անգլիացիները 1940 թ. մարտի 2-ին հանձնել էին շվեդներին. հուշագրում ասված է.

«Դաշնակից կառավարությունները հասկանում են, որ Ֆինլանդիայի ռազմական դրությունը դառնում է հուսահատական։ Բոլոր հնարավորությունները ուշադիր քննելուց հետո, նրանք եկել են այն եզրակացության, որ միակ մի-

ջոցը, որի օգնությամբ նրանք կարող են էֆեկտիվ օգնություն ցույց տալ Ֆինլանդիային, դաշնակից զորքեր ուղարկելն է և իրենք պատրաստ են ուղարկել այդ զորքերը՝ ի պատասխան ֆիննական խնդրանքի»[1]։

Այդ ժամանակ ինչպես այդ մասին անգլիական պառլամենտում մարտի 19-ին հայտարարել է Չեմբերլենը.

«Էքսպեդիցիոն զորամասերի ուղարկման նախապատրաստությունը կատարվում էր առավելագույն արագությամբ և էքսպեդիցիոն բանակը ուղարկման համար պատրաստ էր մարտի սկզբին... այն ժամկետից երկու ամիս առաջ, որ ֆելդմարշալ Մաներհայմը նշանակել էր դրանց ժամանման համար»։

Չեմբերլենն ավելացրեց, որ այդ զորամասերի թիվը հասնում է հարյուր հազար մարդու։

Միաժամանակ ֆրանսիական կառավարությունն էլ պատրաստում էր իր էքսպեդիցիոն կորպուսը, բաղկացած 50 հազար մարդուց, առաջին հերթին Նարվիկի վրայով Ֆինլանդիա ուղարկելու համար։

Անգլո-ֆրանսիական կառավարողները այդ ռազմաշունչ ակտիվությունը ցույց էին տալիս այն ժամանակ, երբ հիտլերյան Գերմանիայի դեմ Անգլիան ու Ֆրանսիան ոչ մի ակտիվություն ցույց չէին տալիս ռազմաճակատում և երբ այնտեղ մղվում էր այսպես կոչված «տարօրինակ պատերազմը»։

Սակայն Սովետական Միության դեմ Ֆինլանդիային ցույց տրվող ռազմական օգնությունը հանդիսացավ միայն անգլո-ֆրանսիական իմպերիալիստների ավելի լայն դիտավորության մի մասը։

Շվեդական արտաքին գործերի մինիստրության վերոհիշյալ «Սպիտակ գրքում» կա շվեդական արտաքին գործերի մինիստր Գյունտերին պատկանող մի փաստաթուղթ։ Այդ փաստաթղթի մեջ ասված է, որ.

«Զորքերի այդ կոնտինգենտի ուղարկումը մտնում էր

---

1. Բրիտանական միության 1940 թ. մարտի 2-ի նոտան. Շվեդիայի արտաքին գործերի մինիստրության «Սպիտակ գիրք», Ստոկհոլմ, 1947 թ., էջ 120։

Սովետական Միության վրա հարձակման ընդհանուր պլանի մեջ», և այդ պլանը «սկսած մարտի 15-ից գործողության մեջ կդրվի Բաքվի դեմ, իսկ է՛լ ավելի շուտ՝ Ֆինլանդիայի վրայով»[1]։

Կերրիլիսը իր «Դը Գոլլը դիկտատոր» գրքում այդ պլանի մասին գրել է հետևյալը.

«Այդ պլանի համաձայն, որի հիմնական գծերն ինձ շարադրել է Պոլ Ռեյնոն[2] մի նամակում, որ պահվում է ինձ մոտ, մոտոռացված էքսպեդիցիոն կորպուսը Նորվեգիայի վրայով ափ իջնելով Ֆինլանդիա, արագորեն կցրեր Ռուսաստանի անկանոն հորդաները և կգնար Լենինգրադի վրա...»[3]։

Այդ պլանը Ֆրանսիայում մշակում էին դը Գոլլը և գեներալ Վեյգանը, Սիրիայում ֆրանսիական զորքերի այն ժամանակվա հրամանատարը, որը պարծենում էր, թե.

«Որոշ համալրումներով և երկու հարյուր ինքնաթիռով ինքը կգրավեր Կովկասը և կմտներ Ռուսաստան, ինչպես դանակը մտնում է յուղի մեջ»։

Հայտնի է նույնպես ֆրանսիական գեներալ Գամելենի 1940 թվին մշակած անգլո-ֆրանսիացիների պատերազմական գործողությունների պլանը ընդդեմ ՍՍՌՄ-ի, որի մեջ առանձնահատուկ ուշադրություն է նվիրվում Բաքվի և Բաթումիի ռմբակոծմանը։

ՍՍՌՄ-ի վրա հարձակվելու ուղղությամբ անգլո-ֆրանսիական կառավարողների նախապատրաստությունն ընթանում էր ամբողջ թափով։ Անգլիայի ու Ֆրանսիայի գլխավոր շտաբներում եռանդուն կերպով մշակվում էին այդպիսի հարձակման պլաններ։ Այդ պարոնայք ուզում էին ֆիտլերյան Գերմանիայի դեմ պատերազմի փոխարեն պատերազմ սկսել Սովետական Միության դեմ։

Բայց այդ պլաններին վիճակված չէր իրականանալու։ Ֆինլանդիան այդ ժամանակ ջախջախվեց սովետական զորքերի կողմից և հարկադրված էր կապիտուլյացիայի դիմել, չնայած Անգ-

---

1. Գյոնտերի գրանցումները հիշողության համար, 1940 թ. մարտի 2-ը. Շվեդիայի արտ. գործ. մինիստր. «Սպիտակ գիրք», Ստոկհոլմ, 1947 թ., էջ 119։

2. Այն ժամանակ ֆրանսիական կառավարության անդամ։

3. Անրի դը Կերիլիս.— «Դը Գոլլը դիկտատոր», Մոնրեալ, 1945 թ., էջ 363—364։

լիայի ու Ֆրանսիայի բոլոր ջանքերին՝ խանգարել նրա կապիտուլյացմանը։

1940 թվի մարտի 12-ին ստորագրվեց սովետա-ֆիննական հաշտության պայմանագիրը։

Այդպիսով բարելավվեց ՍՍՌՄ-ի պաշտպանության գործը հիտլերյան ագրեսիայի դեմ նաև հյուսիսում, Լենինգրադի շրջանում, պաշտպանության գիծը Լենինգրադից հյուսիս առաջ շարժելով 150 կիլոմետր, մինչև ներառյալ Վիբորգը։

Բայց դա դեռևս չէր նշանակում, որ արդեն ավարտված է «արևելյան» ռազմաճակատի ձևավորումը Բալթիկ ծովից մինչև Սև ծովը։ Երկրաբալթյան պետությունների հետ պակտերը կնքված էին, բայց այնտեղ դեռևս չկային սովետական զորքեր, որոնք կարողանային ապահովել պաշտպանությունը։ Մոլդավիան և Բուկովինան ձևականորեն վերամիավորված էին ՍՍՌՄ-ի հետ, բայց այնտեղ էլ դեռևս չկային սովետական զորքեր, որոնք կարողանային ապահովել պաշտպանությունը։ 1940 թվի հունիսի կեսերին սովետական զորքերը մտան Էստոնիա, Լատվիա, Լիտվա։ Նույն տարվա հունիսի 27-ին սովետական զորքերը մտան Բուկովինա ու Մոլդավիա, որ Ռումինիան ՍՍՌՄ-ից խլել էր Հոկտեմբերյան ռևոլուցիայից հետո։

Այդպիսով ավարտվեց «արևելյան» ռազմաճակատի ձևավորումը Բալթիկ ծովից մինչև Սև ծով, ընդդեմ հիտլերյան ագրեսիայի։

Անգլո-ֆրանսիական ղեկավարող շրջանները, որոնց շարունակում էին «արևելյան» ռազմաճակատ ստեղծելու պատճառով ՍՍՌՄ-ին հայհոյել որպես ագրեսոր, ըստ երևույթին, իրենց հաշիվ չէին տալիս, որ «արևելյան» ռազմաճակատի երևան գալը հիտլերյան բռնապետության դեմ մղվող պատերազմի զարգացման մեջ արմատական բեկում է նշանակում հօգուտ դեմոկրատիայի հաղթանակի։

Նրանք չէին հասկանում, որ խոսքը վերաբերում էր ո՛չ թե Ֆինլանդիայի, Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի, Լեհաստանի ազգային իրավունքները սեղմելուն կամ չսեղմելուն, այլ նացիստների դեմ հաղթանակ կազմակերպելու միջոցով կանխել, որ այդ երկրները չդառնային հիտլերյան Գերմանիայի իրավազուրկ գաղութ։

Նրանք չէին հասկանում, որ խոսքը վերաբերում էր գերմանական զորքերի առաջխաղացման առաջ խոչընդոտ ստեղծելուն այն բոլոր շրջաններում, որտեղ այդ հնարավոր էր, կառուցել ամուր պաշտպանություն, իսկ այնուհետև անցնել հակահարձակման. ջախջախել հիտլերյան զորքերը և դրանով իսկ հնարավորություն ստեղծել այդ երկրների ազատ զարգացման համար։

Նրանք չէին հասկանում, որ հիտլերյան ագրեսիայի դեմ հաղթանակ տանելու համար ուրիշ ճանապարհներ գոյություն չունեին։

Ճի՞շտ վարվեց արդյոք անգլիական կառավարությունը պատերազմի ժամանակ իր զորքերը տեղավորելով Եգիպտոսում, չնայած եգիպտացիների բողոքներին և նույնիսկ Եգիպտոսի որոշ տարրերի ընդդիմադրությանը։ Անտարակույս, ճիշտ։ Դա հիտլերյան ագրեսիայի ուղին դեպի Սուեզի ջրանցքի կողմը փակելու, Եգիպտոսը Հիտլերի ոտնձգությունից պաշտպանելու, Հիտլերի դեմ հաղթանակ կազմակերպելու և, այդպիսով, Եգիպտոսը հիտլերյան գաղութի վերածումը կանխելու կարևորագույն միջոցն էր։ Միայն դեմոկրատիայի թշնամիները կամ խելագարները կարող են պնդել, որ անգլիական կառավարության գործողությունները տրվյալ դեպքում ագրեսիա էին։

Ճի՞շտ վարվեց արդյոք Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունն իր զորքերը այի հանելով Կասաբլանկայում, չնայած մարոկկացիների բողոքներին և Պետենի ֆրանսիական կառավարության, որի իշխանությունը տարածվում էր Մարոկկոյի վրա, ռազմական ուղղակի ընդդիմադրությանը։ Անտարակույս, ճիշտ։ Դա ամենալուրջ միջոցն էր գերմանական ագրեսիային ընդդիմադրելու համար բազա ստեղծելու Արևմտյան Եվրոպային անմիջականորեն մոտիկ, հաղթանակ կազմակերպելու հիտլերյան զորքերի դեմ և այդպիսով հնարավորություն ստեղծելու Ֆրանսիան ազատագրելու հիտլերյան գաղութային ճնշումից։ Միայն դեմոկրատիայի թշնամիները կամ խելագարները կարող էին ամերիկյան զորքերի այդ գործողությունները գնահատել որպես ագրեսիա։

Բայց նույնը պետք է ասել Սովետական Կառավարության գործողությունների մասին, որը մինչև 1940 թվի ամառը «արևելյան ռազմաճակատ» կազմակերպեց հիտլերյան ագրեսիայի դեմ և իր զորքերը տեղավորեց Լենինգրադից, Մոսկվայից, Կիևից ըստ հնարավորին հեռու, դեպի արևմուտք։ Դա գերմանական զորքերի

անարդել կերպով դեպի արևելք առաջխաղացման ճանապարհը փակելու, ամուր պաշտպանություն ստեղծելու, իսկ այնուհետև հակահարձակման անցնելու միակ միջոցն էր դաշնակիցների հետ համատեղ ջախջախելու համար Հիտլերյան բանակը և այդպիսով կանխելու Եվրոպայի խաղաղասեր երկրների, այդ թվում Ֆինլանդիայի, Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի, Լեհաստանի վերածումը Հիտլերյան գաղութի։ Միայն դեմոկրատիայի թշնամիները կամ խելագարները կարող էին Սովետական Կառավարության այդ գործողությունները որակել որպես ագրեսիա։

Բայց սրանից հետևում է, որ Չեմբերլենը, Դալադյեն և նրանց համախոհները, որոնք Սովետական Կառավարության այդ քաղաքականությունը որակեցին որպես ագրեսիա և կազմակերպեցին Սովետական Միության վտարումը Ազգերի Լիգայից,— գործում էին որպես դեմոկրատիայի թշնամիներ կամ որպես խելագարներ։

Սրանից հետևում է, այնուհետև, որ ներկայիս զրպարտիչները և պատմության կեղծարարները, որոնք գործում են պ-րն, պ-րն Բևինի ու Բիդոյի հետ համերաշխ և Հիտլերի դեմ «արևելյան ռազմաճակատի» ստեղծումը որակում են որպես ագրեսիա, նույնպես գործում են որպես դեմոկրատիայի թշնամիներ կամ որպես խելագարներ։

Ի՞նչ կլիներ, եթե ՍՍՌՄ-ն դեռևս նախքան Գերմանիայի հարձակումը «արևելյան ռազմաճակատ» չստեղծեր ՍՍՌՄ-ի հին սահմաններից հեռու, դեպի արևմուտք, եթե այդ ռազմաճակատն անցներ ոչ թե Վիբորգ—Կաունաս—Բելոստոկ—Բրեստ—Լվով գծով, այլ Լենինգրադ—Նարվա—Մինսկ—Կիև հին սահմանով։

Դա Հիտլերի զորքերին հնարավորություն կտար հարյուրավոր կիլոմետր տարածություն շահել, 200—300 կիլոմետրով գերմանական ռազմաճակատը մոտեցնել Լենինգրադ—Մոսկվա—Մինսկ—Կիև գծին, լրջորեն կարագացներ գերմանացիների առաջխաղացումը ՍՍՌՄ-ի խորքը, կարագացներ Կիևի և Ուկրաինայի անկումը, կհանգեցներ Մոսկվայի գավթմանը գերմանացիների կողմից, կհանգեցներ Լենինգրադի գավթմանը գերմանացիների ու ֆիններ մի միացյալ ուժերով և ՍՍՌՄ-ին կհարկադրեր անցնելու երկարատև պաշտպանության, որը գերմանացիներին հնարավորություն կտար արևելքից ազատելու հիսուն դիվիզիա անգլիական կղզիներն ափ իջեցնելու համար և Եգիպտոսի շրջանում գերմանա-իտալական

ռազմաճակատն ուժեղացնելու համար։ Միանգամայն հավանական է, որ անգլիական Կառավարությունը հարկադրված կլիներ էվակուացիայի ենթարկվել դեպի Կանադա, իսկ Եգիպտոսը և Սուեզի ջրանցքը կընկնեին Հիտլերի իշխանության տակ։

Բայց սա դեռ բոլորը չէ։ ՍՍՌՄ-ն հարկադրված կլիներ իր զորքերի մեծ մասը մանջուրական սահմանից փոխադրել «արևելյան ռազմաճակատ»՝ իր պաշտպանությունն ուժեղացնելու համար, իսկ դա ճապոնացիներին հնարավորություն կտար Մանջուրիայից ազատել մոտ 30 դիվիզիա և դրանք ուղարկել Չինաստանի, Ֆիլիպինների, ընդհանրապես հարավային-արևելյան Ասիայի դեմ, վերջին հաշվով Հեռավոր Արևելքում գործող ամերիկյան զինված ուժերի դեմ։

Այս բոլորը կհանգեցներ այն բանին, որ պատերազմը կձգձգվեր համենայն դեպս ևս երկու տարի և համաշխարհային երկրորդ պատերազմը կվերջանար ոչ թե 1945 թվին, այլ 1947 թվին կամ մի փոքր ավելի ուշ։

Այսպես է «արևելյան ռազմաճակատի» հարցի դրությունը։

Այնինչ, իրադարձությունները արևմուտքում ընթանում էին իրենց հերթին։

1940 թվի ապրիլին գերմանացիները գրավեցին Դանիան ու Նորվեգիան։ Մայիսի կեսերին գերմանական զորքերը ներխուժեցին Հոլանդիա, Բելգիա և Լյուքսեմբուրգ։ Մայիսի 21-ին գերմանացիները հասան Լամանշի ափերը և դաշնակիցներին կտրեցին Ֆլանդրիայում։ Մայիսի վերջերին անգլիական զորքերը էվակուացիայի ենթարկեցին Դյունկերկը, թողին Ֆրանսիան և քաշվեցին Անգլիա։ Հունիսի կեսերին անձնատուր եղավ Փարիզը։ Հունիսի 22-ին Ֆրանսիան կապիտուլացիայի ենթարկվեց Գերմանիայի առաջ։

Այսպիսով, Հիտլերը ոտնակոխ արեց Ֆրանսիայի ու Անգլիայի հետ չհարձակման բոլոր և ամեն տեսակ դեկլարացիաները։

Դա խաղաղացման քաղաքականության, կոլեկտիվ անվտանգությունից հրաժարվելու քաղաքականության, ՍՍՌՄ-ն մեկուսացնելու քաղաքականության լիակատար ձախողումն էր։

Պարզ դարձավ, որ Ֆրանսիան ու Անգլիան մեկուսացնելով ՍՍՌՄ-ն, խաղաղասեր երկրների միասնական ճակատը ջախջախեցին, թուլացրին իրենց և ինքներն ընկան մեկուսացման մեջ։

1941 թվի մարտի 1-ին գերմանացիները դրավեցին Բուլղարիան։

Ապրիլի 5-ին ՍՍՌՄ-ն Հարավսլավիայի հետ կնքեց չհարձակման պակտ։

Նույն թվի հունիսի 22-ին Գերմանիան հարձակվեց ՍՍՌՄ-ի վրա։

Իտալիան, Ռումինիան, Հունգարիան, Ֆինլանդիան Գերմանիայի կողմում պատերազմի դուրս եկան Սովետական Միության դեմ։

Սովետական Միությունն ազատագրական պատերազմի մեջ մտավ Հիտլերյան Գերմանիայի դեմ։

Եվրոպայի և Ամերիկայի տարբեր շրջաններ տարբեր ձևով վերաբերվեցին այդ իրադարձությանը։

Հիտլերի կողմից ստրկացված ժողովուրդները թեթև շունչ քաշեցին, որոշելով, որ Հիտլերն իր վիզը կկոտրի երկու ճակատների՝ արևմտյան և «արևելյան» ռազմաճակատների միջև։

Ֆրանսիայի կառավարող շրջանները չարախնդում էին, շտապակուսելով որ «Ռուսաստանը կջախջախվի» ամենակարճ ժամանակամիջոցում։

Ամերիկայի Միացյալ Նահանգների սենատի ակնավոր անդամ, իսկ այժմ ԱՄՆ-ի պրեզիդենտ պ-ին Տրումենը ՍՍՌՄ-ի վրա Գերմանիայի հարձակումից մի օր հետո հայտարարեց.

> «Եթե մենք տեսնենք, որ շահում է Գերմանիան, ապա մենք պետք է օգնենք Ռուսաստանին, իսկ եթե շահում է Ռուսաստանը, ապա մենք պետք է օգնենք Գերմանիային, և, այսպիսով, թող նրանք սպանեն որքան կարելի է ավելի շատ»[1]։

Նման հայտարարություն 1941 թվին Մեծ Բրիտանիայում արել է այն ժամանակվա ավիացիոն արդյունաբերության մինիստր Մուր Բրաբազոնը, հայտարարելով, թե որքան դա վերաբերվում է Մեծ Բրիտանիային, արևելյան ճակատում պայքարի լավագույն ելքը կլիներ Գերմանիայի ու ՍՍՌՄ-ի փոխադարձ հյուծումը, որի հետևանքով Անգլիան կկարողանար իշխող դիրք գրավել։

Այս ելույթները, անտարակույս, հանդիսանում էին ԱՄՆ-ի և

---

1. «Նյու-Յորք Թայմս», 1941 թ. հունիսի 24։

Մեծ Բրիտանիայի ռեակցիոն շրջանների դիրքի արտահայտությունը։

Սակայն անգլիական և ամերիկյան ժողովուրդների ճնշող մեծամասնությունը տրամադրված էր հօգուտ ՍՍՌՄ-ի, պահանջելով միանալ Սովետական Միությանը հետ՝ հիտլերյան Գերմանիայի դեմ պայքար մղելու համար։

Այդ տրամադրությունների արտահայտությունը պետք է համարել Մեծ Բրիտանիայի պրեմիեր-մինիստր պ-րն Չերչիլլի 1941 թվի հունիսի 22-ի հայտարարությունն այն մասին, որ.

«Վտանգը Ռուսաստանի համար հանդիսանում է մեր վտանգը և ԱՄՆ-ի վտանգը, ճիշտ այնպես, ինչպես իր հողի և տան համար պայքարող յուրաքանչյուր ռուսի գործը հանդիսանում է ազատ մարդկանց և ազատ ժողովուրդների գործը երկրագնդի ամեն մի մասում»։

ՍՍՌՄ-ի վերաբերմամբ ճիշտ այդպիսի դիրք բռնեց Ռուզվելտի կառավարությունը ԱՄՆ-ում։

Դրանով դրվեց անգլո-սովետա-ամերիկյան կոալիցիայի սկիզբը ընդդեմ հիտլերյան Գերմանիայի։

Հակահիտլերյան կոալիցիան իրեն նպատակ դրեց ջախջախել հիտլերյան ռեժիմը և ազատագրել հիտլերյան Գերմանիայի կողմից ստրկացված ժողովուրդներին։ Չնայած դաշնակից առանձին պետությունների իդեոլոգիայի և տնտեսական սիստեմի մեջ եղած տարբերությանը, անգլո-սովետա-ամերիկյան կոալիցիան դարձավ հիտլերիզմի դեմ մղվող ազատագրական պայքարում իրենց ջանքերը միավորված ժողովուրդների հզոր դաշինք։

Իհարկե, այն ժամանակ, պատերազմի ժամանակ ևս դաշնակիցների միջև տարաձայնություններ կային մի քանի հարցերում։ Հայտնի է, օրինակ, թե ինչպիսի նշանակություն ուներ տարաձայնությունն այնպիսի կարևոր հարցերում, ինչպես երկրորդ ճակատի բացման հարցը, դաշնակիցների պարտականությունների, միմյանց նկատմամբ նրանց բարոյական պարտքի հարցը։

Կառչելով այդ տարաձայնություններին, պատմության կեղծարարները և ամեն տեսակ զրպարտիչներն աշխատում են, հակառակ ակներևության, «ապացուցել», որ ՍՍՌՄ-ն չի եղել և չէր կարող հավատարիմ ու անկեղծ դաշնակից լինել հիտլերյան ագրեսիայի դեմ մղվող պայքարում։ Բայց քանի որ համատեղ պայ-

քարը հիտլերյան Գերմանիայի դեմ և ՍՍՌՄ-ի վարքագիծն այդ պայքարում ո՛չ մի նյութ չեն տալիս այդպիսի մեղադրանքի օգտին, նրանք դիմում են անցյալին, նախապատերազմյան ժամանակաշրջանին, պնդելով, որ 1940 թվին Բեռլինում Հիտլերի հետ «բանակցությունների» ժամանակ Սովետական Միության ներկայացուցիչները իրենց պահում էին ուխտադրժորեն, ոչ դաշնակցորեն։

Նրանք հավատացնում են, թե բեռլինյան «բանակցությունների» ժամանակ քննարկվում և ընդունվում էին «Եվրոպայի բաժանման» ուխտադրուժ «պլաններ», Սովետական Միության տերիտորիալ պահանջները «Սովետական Միությունից դեպի հարավ, դեպի Հնդկական Օվկիանոս», Թուրքիայի, Իրանի, Բուլղարիայի վերաբերյալ «պլաններ» և այլ «պրոբլեմներ»։ Զրպարտիչները այդ նպատակով օգտագործում են գերմանական դեսպանների և հիտլերյան այլ պաշտոնյաների զեկուցագրերը, ամեն տեսակ գրությունները և ինչ-որ «արձանագրությունների» ու դրանց նման այլ «փաստաթղթերի» գերմանական նախագծեր։

Բայց իրականում ի՞նչ է տեղի ունեցել Բեռլինում։ Պետք է ասել, որ 1940 թվի այսպես կոչված «բեռլինյան բանակցությունները» իրականում ոչ այլ ինչ էին, եթե ոչ Վ. Մ. Մոլոտովի պատասխան այցելություն Ռիբբենտրոպի կողմից Մոսկվա կատարած երկու այցելության։ Տեղի ունեցած զրույցները վերաբերում էին գլխավորապես սովետա-գերմանական հարաբերություններին։ Հիտլերն աշխատում էր դրանք հիմք դարձնել գերմանական և սովետական կողմերի միջև ավելի լայն համաձայնության համար։ Սովետական կողմը, ընդհակառակը, դրանք օգտագործում էր զոնդաժի համար, գերմանական կողմի դիրքը տնտղելու համար, ո՛չ մի մտադրություն չունենալով որևէ համաձայնագիր կնքելու գերմանացիների հետ։ Այդ զրույցներում Հիտլերը գտնում էր, որ Սովետական Միությունը պետք է ելք ձեռք բերի դեպի Պարսից ծոցը, դրավելով Արևմտյան Իրանը և անգլիացիների նավթահանքերը Իրանում։ Նա ասում էր, այնուհետև, որ Գերմանիան կարող էր օգնել Սովետական Միությանը կարգավորելու իր պահանջների գործը Թյուրքիայի նկատմամբ ընդհուպ մինչև Նեղուցների վերաբերյալ Մոնտրեի պայմանագրի շտկումը, ըստ որում երբ միանգամայն անտես էին առնվում Իրանի շահերը, նա

ջանասիրությամբ պաշտպանում էր Թյուրքիայի շահերը, բացահայտորեն այն դիտելով որպես իր ներկա կամ, համենայն դեպս, ապագա դաշնակցի։ Ինչ վերաբերում է Բալկանյան երկրներին ու Թյուրքիային, ապա Հիտլերը դրանք դիտում էր որպես Գերմանիայի ու Իտալիայի ազդեցության ոլորտներ։

Այդ զրույցներից Սովետական Կառավարությունն արավ հետևյալ հետևությունները. Գերմանիան թանկ չի գնահատում իր կապերը Իրանի հետ. Գերմանիան կապված չէ և չի մտածում կապվել Անգլիայի հետ։ Ուրեմն Սովետական Միությունը հանձին Անգլիայի կարող է հուսալի դաշնակից ունենալ Հիտլերյան Գերմանիայի դեմ։ Բալկանյան պետությունները կամ արդեն կապված են ու վերածված Գերմանիայի արբանյակների (Բուլղարիա, Ռումինիա, Հունգարիա), կամ թե ստրկացված են, ինչպես Չեխոսլովակիան, կամ թե կանգնած են ստրկացման ճանապարհի վրա, ինչպես Հունաստանը։ Հարավսլավիան Բալկանյան միակ երկիրն է, որի վրա կարելի է հույս դնել որպես հակահիտլերյան բանակի ապագա դաշնակցի. Թյուրքիան կամ արդեն սերտ կապերով կապված է Հիտլերյան Գերմանիայի հետ կամ թե մտադիր է կապվել նրա հետ։

Անելով այդ օգտակար հետևությունները, Սովետական Կառավարությունն այլևս չէր վերադառնում որևէ զրույց անելու շարադրված հարցերի շուրջը, չնայած Ռիբբենտրոպի հաճախակի հիշեցումներին։

Ինչպես երևում է, դա զոնդաժ էր, Հիտլերյան կառավարության դիրքի տնտղումը Սովետական Կառավարության կողմից, որը չավարտվեց և չէր կարող ավարտվել որևէ համաձայնագրով։

Թույլատրելի՞ է այդպիսի հակառակորդի դիրքի այդպիսի զոնդում խաղաղասեր պետությունների կողմից։ Անպայման թույլատրելի է։ Եվ ոչ միայն թույլատրելի է, այլև երբեմն ներկայացնում է քաղաքական ուղղակի անհրաժեշտություն։ Անհրաժեշտ է միայն, որ այդ զոնդումը տեղի ունենա դաշնակիցների գիտությամբ ու համաձայնությամբ և զոնդումի արդյունքները հաղորդվեն դաշնակիցներին։ Սակայն, այն ժամանակ Սովետական Միությունը դաշնակիցներ չուներ. նա մեկուսացված էր և, դժբախտաբար, չէր կարող նրանց հաղորդել զոնդումի արդյունքները։

Պետք է նշել, որ Հիտլերյան Գերմանիայի դիրքի նմանօրինակ-

թեև վատ բնույթ կրող, զոնդում կատարել են Անգլիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների ներկայացուցիչները պատերազմի ժամանակ՝ արդեն Անգլիա-Ամերիկայի Միացյալ Նահանգներ—ՍՍՌՄ հակահիտլերյան կոալիցիա կազմակերպվելուց հետո: Դա երևում է Գերմանիայում սովետական զորքերի գրաված փաստաթղթերից:

Այդ փաստաթղթերը ցույց են տալիս, որ 1941 թվի աշնանը, ինչպես նաև 1942 և 1943 թվերին, Լիսաբոնում և Շվեյցարիայում, ՍՍՌՄ-ի թիկունքում, բանակցություններ էին վարվում Անգլիայի ու Գերմանիայի ներկայացուցիչների և ապա Ամերիկայի Միացյալ Նահանգների ու Գերմանիայի ներկայացուցիչների միջև՝ Գերմանիայի հետ հաշտության պայմանագիր կնքելու հարցի շուրջը:

Փաստաթղթերից մեկում՝ Գերմանիայի արտաքին գործերի մինիստրի տեղակալ Վեյցզեկերի զեկուցագրի հավելվածում, շարադրվում է Լիսաբոնում 1941 թվի սեպտեմբերին տեղի ունեցած այդ բանակցությունների ընթացքը: Այդ փաստաթղթից երևում է, որ սեպտեմբերի 13-ին տեղի է ունեցել լորդ Բիվերբրուկի որդի, անգլիական բանակի սպա, հետագայում անգլիական պառլամենտի անդամ, Անգլիան ներկայացնող էյտկենի հանդիպումը հունգարացի գուստավ Ֆոն Կեվլերի հետ, որը գործում էր Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության հանձնարարությամբ, ինչպես կարելի է դատել դրա մասին, ժընևում գերմանական գլխավոր հյուպատոս Կրաուելի Վեյցզեկերի անունով ուղարկված նամակից:

Այդ բանակցությունների ժամանակ, էյտկենը ուղղակի հարց է դրել՝ «չէ՞ր կարելի արդյոք օգտագործել վերահաս ձմեռն ու գարունը հաշտության հնարավորությունը գաղտնաբար քննարկելու համար»:

Մյուս փաստաթղթերը խոսում են այն բանակցությունների մասին, որոնք տեղի էին ունենում ԱՄՆ-ի և Գերմանիայի կառավարությունների ներկայացուցիչների միջև 1943 թվի փետրվարին Շվեյցարիայում: Այդ բանակցությունները ԱՄՆ-ի կողմից վարում էր ԱՄՆ-ի կառավարության հատուկ լիազոր Ալլեն Դալլեսը (Ջոն Ֆոստեր Դալլեսի եղբայրը), որը հանդես էր եկել «Բալլ» ծածկանունով և «անմիջականորեն հանձնարարություններ ու լիազորություններ էր ստացել Սպիտակ Տնից»: Գերմանական կողմից նրա

զրույցակիցն էր իշխան Մ. Հոհենլոյեն՝ հիտլերյան Գերմանիայի կառավարող շրջաններին մոտ կանգնած մի անձնավորություն, որը գործում էր որպես հիտլերյան ներկայացուցիչ «Պաուլս» մտացածին ազգանվան տակ։ Այդ բանակցությունները շարադրող փաստաթուղթը պատկանում էր հիտլերյան անվտանգության ծառայությանը (S. D.)։

Ինչպես ցույց է տալիս փաստաթուղթը, զրույցի ժամանակ շոշափվել են Ավստրիային, Չեխոսլովակիային, Լեհաստանին, Ռումինիային, Հունգարիային վերաբերող կարևոր հարցեր, և, որ առանձնապես կարևոր է, Գերմանիայի հետ հաշտություն կնքելու հարցը։

Իր զրույցի ժամանակ Ալեն Դալլեսը (Բալլը) հայտարարել է թե

«այսուհետև երբեք թույլ չի տրվի, որ գերմանականի պես ժողովուրդներ ստիպված լինեն դիմելու հուսահատ փորձերի ու հերոսության՝ անարդարացիության և կարիքի պատճառով։ Գերմանական պետությունը պետք է շարունակի գոյություն ունենալ, որպես կարգի ու վերականգնման գործոն։ Նրա բաժանման կամ Ավստրիայից անջատվելու մասին խոսք անգամ չի կարող լինել»։

Շոշափելով Լեհաստանը, Դալլեսը (Բալլը) հայտարարել է, որ

«...Լեհաստանը դեպի արևելք ընդարձակելու և Ռումինիան ու ուժեղ Հունգարիան պահպանելու միջոցով, պետք է պաշտպանել սանիտարական պատնեշի ստեղծումը բոլշևիզմի ու պանսլավիզմի դեմ»[1]։

Այնուհետև զրույցի գրառման մեջ նշվում է, որ

«Միստեր Բալլը քիչ թե շատ համաձայն է Եվրոպայի պետական և արդյունաբերական կազմակերպման հետ՝ մեծ տարածությունների հիման վրա, ենթադրելով, որ ֆեդերատիվ Մեծ Գերմանիան (ԱՄՆ-ի պես), նրան հարող Դանուբի կոնֆեդերացիայի հետ միասին, լավագույն երաշխիքը կլինի Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում կարգ հաստատելու և վերականգնելու համար»[2]։

---

1. «Պաուլս—մ-ր Բալլի զրույցը»։ Գերմանական արխիվային փաստաթղթերից։

2. Տե՛ս վերև ցիտված փաստաթուղթը։

Դալլեսը (Բալլը) նաև հայտարարել է, որ նա միանգամայն ընդունում է գերմանական արդյունաբերության հավակնությունը Եվրոպայում առաջատար դեր խաղալու նկատմամբ։

Չի կարելի չնշել, որ անգլիացիները և ամերիկացիները այդպիսի զոնդումը կատարել են առանց իրենց դաշնակցի՝ Սովետական Միության գիտության և համաձայնության, ընդ որում, Սովետական Կառավարությանը ոչինչ չի հաղորդվել այդ զոնդումի արդյունքների մասին, նույնիսկ հետագա ինֆորմացիայի կարգով։

Այդ կարող էր նշանակել, որ ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունները տվյալ դեպքում փորձ են արել ոտք դնելու Հիտլերի հետ սեպարատ հաշտության մասին բանակցություններ վարելու ուղին։

Պարզ է, որ Անգլիայի և ԱՄՆ-ի կառավարությունների այդ վարքագիծը չի կարելի դիտել այլ կերպ, եթե ոչ որպես դաշնակցային պարտքի ու դաշնակցային պարտավորությունների տարրական պահանջների խախտում։

Դուրս է գալիս, որ պատմության կեղծարարները մեղադրելով ՍՍՌՄ-ն «ոչ անկեղծ» լինելու համար, այստեղ մեղքը ուրիշի ուսին են բարդում։

Տարակույս չի կարող լինել, որ պատմության կեղծարարներին և մյուս զրպարտիչներին հայտնի են այդ փաստաթղթերը։ Եվ եթե նրանք թաքցնում են այդ փաստաթղթերը հասարակական կարծիքից, լռության մատնելով այդ բանը ՍՍՌՄ-ի դեմ իրենց մղած զրպարտիչ կամպանիայում, ապա դրա պատճառն այն է, որ նրանք ժանտախտի նման վախենում են պատմական ճշմարտությունից։

Ինչ վերաբերում է երկրորդ ճակատ բանալու հարցում ստեղծված տարաձայնություններին, ապա այստեղ դրսևորվեց դաշնակիցների պարտականությունների և նրանց փոխհարաբերությունների տարբեր ըմբռնում։ Սովետական մարդիկ գտնում են, որ եթե դաշնակիցը փորձանքի մեջ է ընկել, ապա նրան պետք է փրկել մատչելի բոլոր միջոցներով, որ իր դաշնակցին պետք է վերաբերվել ոչ որպես ժամանակավոր ուղեկցի, այլ որպես բարեկամի, ուրախանալով նրա հաջողությունների առթիվ, ուրախանալով նրա ուժեղանալու առթիվ։ Անգլիացիների և ամերիկացիների ներկայացուցիչները համաձայն չեն դրան և այդպիսի բարոյականությունը նախիվություն են համարում։ Նրանք ելնում են

այն բանից, որ ուժեղ դաշնակիցը վտանգավոր է, որ դաշնակցի ուժեղանալը նրանց շահերին չի համապատասխանում, որ ավելի լավ է ունենալ թույլ դաշնակից ,քան ուժեղը, իսկ եթե նա, այնուամենայնիվ, ուժեղանում է, պետք է միջոցներ ձեռք առնել նրան թուլացնելու համար։

Բոլորին հայտնի է, որ 1942 թվի հունիսի անգլո-սովետական կոմյունիկեում, ինչպես նաև սովետա-ամերիկյան կոմյունիկեում, անգլո-ամերիկացիները պարտավորություն էին ստանձնել դեռ 1942 թվին բանալ Եվրոպայում երկրորդ ճակատ։ Դա մի հանդիսավոր խոստում էր, եթե կուզեք՝ մի երդում, որը պետք է կատարվեր սահմանված ժամկետին՝ Սովետական Միության զորքերի գործը թեթևացնելու համար, որոնք պատերազմի առաջին շրջանում իրենց վրա էին կրում գերմանական ֆաշիզմին հակահարված տալու ամբողջ ծանրությունը։ Բայց նաև հայտնի է, որ այդ խոստումը չկատարվեց ո՛չ 1942 թվին, ո՛չ 1943 թվին, չնայած, որ Սովետական Կառավարությունը բազմիցս հայտարարել է, թե Սովետական Միությունը չի կարող հաշտվել երկրորդ ճակատը հետաձգելու հետ։

Երկրորդ ճակատը հետաձգելու քաղաքականությունը բնավ պատահական չէր։ Նա սնունդ էր առնում Անգլիայի և Ամերիկայի այն ռեակցիոն շրջանների ձգտումից, որոնք իրենց նպատակներն էին հետապնդում Գերմանիայի դեմ մղվող պատերազմում, նպատակներ, որոնք ոչ մի առնչություն չունեին գերմանական ֆաշիզմի դեմ պայքարելու ազատագրական խնդիրների հետ։ Նրանց պլանների մեջ չէր մտնում գերմանական ֆաշիզմը լիովին ջախջախելու խնդիրը։ Նրանք շահագրգռված էին Գերմանիայի հզորության թուլացմամբ և գլխավորապես Գերմանիայի, որպես համաշխարհային շուկայում վտանգավոր մրցակցի, հեռացումով, ելնելով իրենց նեղ շահադիտական նպատակներից։ Բայց նրանք բնավ մտադիր չէին ազատագրել Գերմանիան և մյուս երկրները այն ռեակցիոն ուժերի տիրապետությունից, որոնք հանդիսանում են իմպերիալիստական ագրեսիայի ու ֆաշիզմի մշտական կրողներ, ինչպես նաև մտադիր չէին իրականացնել դեմոկրատական արմատական վերափոխումներ։

Դրա հետ միասին, նրանք իրենց հաշիվները կառուցում էին ՍՍՌՄ-ի թուլացման վրա, նրա արյունաքամության և այն բանի

վրա, որ հյուծիչ պատերազմի հետևանքով ՍՍՌՄ-ն երկար ժամանակվա համար կկորցնի իր, որպես մեծ ու հզոր տերության, նշանակությունը և պատերազմից հետո կախման մեջ կընկնի Ամերիկայի Միացյալ Նահանգներից ու Մեծ Բրիտանիայից։

Հասկանալի է, որ Սովետական Միությունը չի կարող նորմալ համարել դաշնակցին ցուցաբերվող նմանօրինակ վերաբերմունքը։

Այդ քաղաքականության կատարյալ հակապատկերն է միջդաշնակցային հարաբերությունների ասպարեզում ՍՍՌՄ-ի վարած քաղաքականությունը։ Այդ քաղաքականությունը բնորոշվում է ստանձնած պարտավորությունների մշտապես անշահասեր, հետևողական ու ազնիվ կատարումով, իր դաշնակցին միշտ ընկերական օգնություն ցույց տալու պատրաստակամությամբ։ Սովետական Միությունը անցած պատերազմի ժամանակ տվեց մյուս երկրներին՝ ընդհանուր թշնամու դեմ մղվող պայքարում մարտական ընկերներին ցուցաբերվող իսկական դաշնակցային վերաբերմունքի օրինակներ։

Ահա այդպիսի փաստերից մեկը։

Ինչպես հայտնի է, 1944 թվի դեկտեմբերի վերջերին հիտլերյան զորքերը հարձակում սկսեցին արևմտյան ճակատի Արդենի շրջանում, ճեղքեցին ճակատը և ծանր դրության մեջ դրին անգլո-ամերիկյան զորքերին։ Դաշնակիցների պնդումով, գերմանացիները ցանկանում էին, հարված հասցնելով Լյեժին, ջախջախել ամերիկյան առաջին բանակը, դուրս գալ դեպի Անտվերպեն, կտրել ամերիկյան 9-րդ, բրիտանական 2-րդ ու կանադական 1-ին բանակները և դաշնակիցների համար սարքել երկրորդ Դյունկերկ, որպեսզի Անգլիան դուրս բերեն պատերազմից։

Այդ կապակցությամբ, 1945 թվի հունվարի 6-ին, Ու. Չերչիլը դիմեց Ի. Վ. Ստալինին հետևյալ բովանդակությամբ ուղերձով՝

«Արևմուտքում շատ ծանր մարտեր են տեղի ունենում և ամեն րոպե Գերագույն Հրամանատարությունից կարող են պահանջվել մեծ որոշումներ։ Դուք ինքներդ Ձեր սեփական փորձով գիտեք, թե որքան տագնապալից է դրությունը, երբ կարիք է լինում պաշտպանել շատ լայն ճակատներ՝ նախաձեռնությունը ժամանակավորապես կորցնելուց հետո։ Գեներալ էյզենհաուերի համար շատ ցանկալի և անհրաժեշտ է գիտենալ ընդհանուր գծերով, թե ինչ եք

մտադիր անել Դուք, որովհետև դա, իհարկե կանդրադառնա նրա և մեր բոլոր կարևորագույն որոշումների վրա։ Ստացված հաղորդագրության համաձայն, մեր պատվիրակը՝ ավիացիայի գլխավոր մարշալ Տեդդերը երեկ երեկոյան դանվում էր Կահիրեում, կաշկանդված լինելով եղանակի պատճառով։ Նրա ուղևորությունը շափազանց ձգձգվեց ոչ Ձեր մեղքով։ Եթե նա դեռևս չի ժամանել Ձեզ մոտ, ես շնորհակալ կլինեմ, եթե Դուք կարողանաք ինձ հաղորդել, թե արդյոք մենք կարո՞ղ ենք հույս դնել ռուսական խոշոր հարձակման վրա Վիսլայի ռազմաճակատում կամ որևէ այլ տեղում հունվար ամսի ընթացքում և ամեն մի այլ պահին, որոնց մասին Դուք թերևս կցանկանաք հիշատակել։ Ես ոչ ոքի չեմ հաղորդի այս շափազանց գաղտնի իմֆորմացիան, բացի ֆելդմարշալ Բրուկից և գեներալ Էյզենհաուերից, ամենախիստ գաղտնիք պահպանելու պայմանով։ Ես գործը շտապ եմ համարում»։

1945 թվի հունվարի 7-ին Ի. Վ. Ստալինը Ու. Չերչիլին ուղարկեց հետևյալ պատասխանը՝

«Հունվարի 7-ի երեկոյան ստացա 1945 թվի հունվարի 6-ի Ձեր ուղերձը։

Դժբախտաբար ավիացիայի գլխավոր մարշալ պ-ին Տեդդերը դեռևս Մոսկվա չի ժամանել։

Շատ կարևոր է օգտագործել գերմանացիների նկատմամբ մեր գերազանցությունը հրետանու և ավիացիայի ասպարեզում։ Դրա համար պահանջվում է պարզ եղանակ ավիացիայի համար և ցածր մառախուղի բացակայություն, որոնք խանգարում են հրետանին նշանոցային կրակ վարելու։ Մենք պատրաստվում ենք հարձակման, բայց եղանակն այժմ չի նպաստում մեր հարձակմանը։ Սակայն, հաշվի առնելով մեր դաշնակիցների դրությունը արևմտյան ճակատում, Գերագույն Գլխավոր հրամանատարության զորակայանը որոշել է ուժեղ տեմպով ավարտել նախապատրաստությունը և, անտեսելով եղանակը, բանալ հարձակողական խոշոր գործողություններ գերմանացիների դեմ ամբողջ կենտրոնական ճակատի երկարությամբ ոչ ուշ, քան հունվարի երկրորդ կեսին։ Կարող եք շտապակուսել, որ մենք

կանենք այն ամենը, ինչ որ միայն հնարավոր է անել, որպեսզի օժանդակություն ցույց տանք մեր պանծալի դաշնակից զորքերին»։

Ի. Վ. Ստալինին ուղարկած պատասխան ուղերձում Ու. Չերչիլը հունվարի 9-ին գրում է՝

«Ես շափազանց շնորհակալ եմ Ձեզ, Ձեր հուզիչ ուղերձի համար։ Ուղերձը ես ուղարկեցի գեներալ Էյզենհաուերին միմիայն անձամբ նրան ի գիտություն։ Թող լիակատար հաջողություն ուղեկցի Ձեր ազնիվ ձեռնարկմանը»։

Ցանկանալով արագացնել արևմուտքի դաշնակցային զորքերին ցույց տրվելիք օգնությունը, սովետական զորքերի Գերագույն Գլխավոր Հրամանատարությունը որոշեց սովետա-գերմանական ճակատում գերմանացիների դեմ հարձակում գործելու ժամկետը հունվարի 20-ից փոխադրել հունվարի 12-ին։ Հունվարի 12-ին սկսվեց սովետական զորքերի մեծ հարձակումը Բալթիկ ծովից մինչև Կարպատներն ընկած լայն ճակատում։ Շարժման մեջ դրվեց սովետական 150 դիվիզիա, մեծ քանակությամբ հրետանիով ու ավիացիայով, որոնք ճեղքեցին գերմանական ճակատը և հարյուրավոր կիլոմետր ետ շպրտեցին գերմանական զորքերին։

Հունվարի 12-ին արևմտյան ճակատի գերմանական զորքերը, այդ թվում 5-րդ և 6-րդ տանկային բանակները, որոնք նշանակված էին նոր հարվածի համար, դադարեցրին իրենց հարձակումը և 5—6 օրվա ընթացքում դուրս բերվեցին ռազմաճակատից ու նետվեցին դեպի արևելք՝ հարձակվող սովետական զորքերի դեմ։ Գերմանական զորքերի հարձակումն արևմուտքում տապալվեց։

1945 թվի հունվարի 17-ին Ու. Չերչիլը Ի. Վ. Ստալինին գրել է՝

«Ես շատ շնորհակալ եմ Ձեզ Ձեր ուղերձի համար, և շատ ուրախ եմ, որ ավիացիայի մարշալ Տեդդերը նպաստավոր տպավորություն է գործել Ձեզ վրա։

Նորին Մեծության Կառավարության անունից և ամբողջ հոգով ցանկանում եմ մեր երախտագիտությունը և շնորհավորանքը հայտնել Ձեզ այն վիթխարի հարձակման առթիվ, որ սկսել եք Դուք Արևելյան ճակատում։

Ձեզ, անտարակույս, այժմ հայտնի են գեներալ Էյզենհաուերի պլանները և ինչ չափով դրանց իրականացումը

ձգձգվեց Ռունդշտեդտի խանգարիչ հարձակումով։ Ես հավատացած եմ, որ մեր ամբողջ ճակատում մարտերը տեղի կունենան անընդհատ։ Բրիտանական 21-րդ բանակային խումբը, ֆելդմարշալ Մոնտգոմերիի հրամանատարությամբ, այսօր հարձակում է սկսել Ռուերմոնդից հարավ ընկած շրջանում»։

Սովետական զորքերին 1945 թվի փետրվարին Ի. Վ. Ստալինի տված հրամանում սովետական զորքերի այս հարձակման մասին ասված է՝

«Այս տարվա հունվարին Կարմիր Բանակը չտեսնված ուժի հարված հասցրեց թշնամուն, ամբողջ ռազմաճակատում Բալթիկայից մինչև Կարպատները։ Նա 1200 կիլոմետր երկարության վրա խորտակեց գերմանացիների հզոր պաշտպանությունը, որը նրանք ստեղծել էին մի շարք տարիների ընթացքում։ Հարձակման ընթացքում Կարմիր Բանակը արագ և հմուտ գործողություններով թշնամուն ետ շպրտեց հեռու՝ դեպի Արևմուտք։

Մեր ձմեռային հարձակման հաջողությունները ամենից առաջ հանգեցին այն բանին, որ տապալեցին գերմանացիների ձմեռային հարձակումը Արևմուտքում, որի նպատակն էր գրավել Բելգիան ու Էլզասը, և մեր դաշնակիցների բանակներին հնարավորություն տվեցին իրենց հերթին հարձակման անցնելու գերմանացիների դեմ և դրանով իսկ իրենց հարձակողական գործողությունները Արևմուտքում միացնել Կարմիր Բանակի հարձակողական գործողությունների հետ Արևելքում»։

Այսպես էր գործում Ի. Վ. Ստալինը։

Այդպես են գործում իսկական դաշնակիցները ընդհանուր պայքարում։

***

Սրանք են փաստերը։

Իհարկե, պատմության կեղծարարները և զրպարտիչները կեղծարարներ և զրպարտիչներ են կոչվում հենց այն պատճառով, որ նրանք հարգանք չեն տածում դեպի փաստերը։ Նրանք գերադա-

սում են գործ ունենալ բանսարկության, զրպարտության հետ։ Բայց հիմք չկա տարակուսելու, որ այդ պարոնայք վերջ ի վերջո այնուամենայնիվ, ստիպված կլինեն խոստովանել բոլորին հայտնի մի ճշմարտություն, այն, որ բանասարկությունը և զրպարտությունը կործանվում են, իսկ փաստերը մնում են։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԲՅՈՒՐՈ

Խմբ. հսկողությամբ՝ Ս. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տեխ. խմբագիր՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ն. ՔԱԼԱՇՅԱՆ

ԷՎՖ 03760 Պատ. 225. Տիրաժ 5000. Տպագր. 5 մամուլ. հեղ. 4,1 մամ.։
Հանձնված է արտադրության 25/III 48 թ. Ստորագրված է
տպագրության 2/VI—1948 թ.

Հայպետհրատի № 1 տպարան, Երևան, Լենինի փող. 65։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220032526

[204]

A II 32526

ԳԻՆԸ 2 Ռ.